№ 200 ՀԻՆԳՇԱԲԹԻ, 15 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ

1911
ԵՐԵՍՈՒՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՀԻՆԳՇԱԲԹԻ, 15 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ № 200

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Сергіевская ул., № 5.
Tiflis, Rédaction „Mschak"

Խմբագրատան տելեֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն ժամ

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.

Տպարանի տելեֆօն № 67.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ
(39-ՐԴ ՏԱՐԻ)

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ".
TIFLIS, Rédaction du journal „MSHAK".

Սեպտեմբերի 1-ից մինչեւ տարվայ վերջը 4 ռուբլի։

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն եւ 40 կ. նամականիշ։ ՀԻՆ ՀԱՍՑԷՆ եւ 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ։

Յայտարարութիւնների համար պէտք վճարել. I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կոպ., IV երեսի վրա—10 կոպ.։

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торгов. Дома .. и Э. Метцль и К-о, Мясницкая, д. Сытова, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում Морская, 11, Վարշավայում Маршальковская, 130, Վիլնօյում Большая, 38, Պարիզում 8 Площадь Биржи.

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Նատալիա, Վաղարշ և Սօնա ՍԻՄԷՕՆԵԱՆՆԵՐԸ, Մաշօ և Վասօ ՊԱՊՕՎԵԱՆՆԵՐԸ յայտնում են իրանց ազգականներին և ծանօթներին՝ առաջինն իր թանգագին ամուսնու, երկրորդն ու չորրորդը իրանց անմոռանալի հօր, երրորդն իր սիրելի սկեսրայրի, իսկ վերջինն իր աներոջ՝

Զաքարէ Վարդանեան ՍԻՄԷՕՆԵԱՆՑԻ

մահը, որ տեղի ունեցաւ սեպտեմբերի 11-ին երեկոյեան։ Մարմնի յուղարկաւորութիւնը այսօր, հինգշաբթի, սեպտեմբերի 15-ին, առաւօտեան ժամը 11-ին, հանգուցեալի բնակարանից (Պրէօբրաժէնսկայա փող. № 1) դէպի Կարմիր Աւետարանի եկեղեցին։ Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը։ 894. 1—1

ՆՈՐՈՅԹ! „ԼԻՐԱ" ՆՈՐՈՅԹ!

Հինգշաբթի, սեպտեմբերի 15-ից, տեղի կունենայ

ԱՌԱՋՆԱԿԱՐԳ „ԼԻՐԱ" ԷԼԵԿՏՐՕ-ԹԱՏՐՕՆԻ
ԲԱՑՈՒՄԸ

Միխայլովսկի պրոսպ., տ. Վեռցելի, № 103.

ԿԱՑԱՐԱՆԸ ԿԱՏԱՐԵԼԱՊԷՍ ՎԵՐԱՆՈՐՈԳՎԱԾ Է.

Կոմֆօրտ! Յարմարութիւն!

Ի նկատի ունենալով սինեմատօգրաֆի կուլտուրական-լուսաւորական նշանակութիւնը կեանքում, նոր վարչութիւնը գործ կը դնէ իր բոլոր ջանքերը, որպէսզի «ԼԻՐԱ» թատրօնը ներկայացնէ իրանից գեղարուեստական մի լուրջ թատրօն, որի նպատակը պիտի լինի ծառայել գեղեցկին և ճշմարտութեան։ Պատկերները կը դրվեն Հռոմի յայտնի կինեմատոգր. «Կ. Սանֆան» լայնածաւալ ֆիրմայի անմիջական հսկողութեան ներքոյ, որպիսի հանգամանքը կարող է ծառայել որպէս գրաւական բազմակողմանի և յայտնի սիւժէտների ընտրութեան։

«ԼԻՐԱ» թատրօնի բացումը սեպտեմբերի 15-ից, ցեր. ժամը 5-ից։

ՀԱՐՈՒՍՏ ԵՒ ԸՆՏԻՐ ԾՐԱԳԻՐ!!

1—1 895. «ԼԻՐԱ» թատրօնի Վարչութիւն

ԱՇԽԱՐՀԻՍ ՎՐԱ ՈՉԻՆՉ ՉԸ ԿԱՅ ԱՆԿԱՐԵԼԻ
ՈՐԸ ԵՒ ԱՊԱՑՈՒՑԵԼ Է ԾԽԱԽՈՏ

20 ՀԱՏԸ 6 ԿՈՊ. ՍԱԼԻԽՏԸ 20 ՀԱՏԸ 6 ԿՈՊ.

Առաջինն է ըստ յատկութեան, առողջապահութեան տեսակէտից, մնում են միշտ թարմ։

Ընկ. Ա. Ն. ԲՕՂԴԱՆՕՎ եւ Ընկ.

Ներկայացուցիչ Ստեփան Նիկիտիչ Կարապետեանց

10—4 765. Թիֆլիս, Բէհբութեան փող., 37.

(օգ. 27,28, ս. 15,25,27,29, հ. 2,4,6) առ.

ԲԺՇԿԱՊԵՏ
ՎԼ. ԳՐ. ԲՕԺՕՎՍԿԻ

Վերադառնալով արտասահմանից վերսկսեց հիւանդների ընդունելութիւնը։ Ներքին հիւանդ. և բժշկութիւն հիպնօսով։ Ամեն օր, բացի կիրակի օրերից, երեկ. ժ. 6—8-ը։
Крыловская, 7.
առ. (Կ.) 820. 10—4

ԲԺԻՇԿ
Գր. ՄԱԿԱՐԵԱՆ
Ներքին եւ երեխայոց հիւանդութիւններ

Ընդունում է հիւանդներին իր նոր բնակարանում՝ Գանօվսկայա փողոց, տուն Սէյլանովների, № 18, տելեֆօն 615.
Առաւօտեան 12—1 ժամը
Երեկոյեան 5—6 ժամը
(Ն.Հ.Կ.) առ. 819. 100—9

ФАБРИКИ А.ЭНФІАДЖІАНЦА
ПАПИРОСЫ
ИНТЕЛЛИГЕНТНЫЯ
ЦѢНА 25шт.15к.
10ш.6к.100ш.60к.
ПАПИРОСЫ
ЛЕВЪ 20шт. 5коп.
ФАБРИКИ А.ЭНФІАДЖІАНЦА
ПАПИРОСЫ
ЭКСТРА
15шт. 6коп.
ФАБРИКИ А.ЭНФІАДЖІАНЦА

662. 100—38 առ. (Ն. Հ. Կ.)

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Ս. Գ. ԿԷՕՆՃԵԱՆ

Ընդունում է ատամի և բերանի հիւանդութիւն ունեցողներին։ Պլոմբ, արհեստական ատամներ և այլն։
Աշակերտներին և ծառայողներին 50% զեղչ, չքաւորներին ձրի։
Ընդունելութիւնը առ. ժամը 9—2-ը և 4—7-ը երեկ.
Միքայէլեան փող. № 6, մուտքը Նըբրափողոցից։
(Ն.Հ.Կ.) առ. 876. 50—3

ԲԺԻՇԿ
Ռ. Ս. ԴԱՒԹԵԱՆՑ
Ներքին եւ ջղային հիւանդութիւններ

Ընդունելութիւնը (ցերեկվայ ժամը 12—1.
ամեն օր (երեկոյեան ժամը 5—7.
Հասցէն՝ Կօչուբէեվսկայա փող. № 22.
Ելիզավէտինսկայա փողոցից՝ № 44 տան անկիւն։
(Ն. Հ. Կ.) առ. 243. 100—68

Մցարայի ծխական միդասեան երկսեռ դպրոցի համար հարկաւոր են ԵՐԿՈՒ շրջանաւարտ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ, որոնցից մէկը պէտք է միաձայն խումբ պատրաստէ եկեղեցու համար։

Պայմանների մասին դիմել հոգաբարձութեան՝ Гудауты, черезъ Мцарск. сельское управл. Попечительству.
առ. 896. 2—1

ԼԵՌՆԸՆԴՄԷՋ ԵՐԿԱԹՈՒՂԻՆ

Կովկաս է եկել պաշտօնական յատուկ մի յանձնաժողով՝ նորից ուսումնասիրելու կովկասեան լեռնընդմէջ երկաթուղու խնդիրը։

Ճիշդ է, Ռուսաստանը Պետրովսկի և Դերբենտի վրայով ունի երկաթուղիական հաղորդակցութիւն Անդրկովկասի հետ. ճիշդ է և այն, որ Սև-ծովեան երկաթուղու ծրագիրը մօտենում է իր իրագործութեան, բայց և այնպէս իր ոյժի մէջն է մնում կենտրոնական երկաթուղու անհրաժեշտութեան խնդիրը։

Ոչ առաջին, ոչ երկրորդ երկաթուղին չեն կարող բաւարար համարվել հաղորդակցութեան մեծ պահանջների համար։ Պետութիւնը կարիք ունի կենտրոնական ուղիի կառուցման, որը միացնէր Եւրոպական Ռուսաստանը Անդրկովկասի հետ լեռնաշղթայի աւելի կենտրոնական մասում, միացնելով Վլադիկավկազի շրջանը Թիֆլիսի հետ։

Կասպից ծովի ափով անցնող երկաթուղին շատ հեռու է Անդրկովկասի կենտրոնից և զբաղված կը լինի իրան յատուկ ապրանքների փոխադրութեամբ։ Նա նոյնիսկ այժմ անընդունակ է հանդիսանում փոխադրել ժամանակին կուտակված մթերքները, իսկ բացառիկ հանգամանքներում, օրինակ՝ պատերազմի միջոցին, նա չափազանց ծանր վիճակի մէջ կընկնի, անկարող լինելով արագ հաղորդակցութեան և մեծաքանակ ռազմամթերքի հայթայթման ծառայել։

Իսկ Սև-ծովեան երկաթուղին պատերազմի միջոցին կը դառնայ ապարդիւն, որովհետև նա ենթակայ կը լինի ռմբակոծութեան ծովի կողմից, ուստի և անկարող կը հանդիսանայ կատարել իրան վերապահված դերը։ Սև-ծովի ափերը չունեն ընդարձակ տափարակներ, ուստի երկաթուղին պէտք է անցնի ջրի եզերքին. շատ մօտ և անկարող կը լինի ազատ մնալ թշնամու ռմբակոծութիւններից, որոնք կարող են լինել ճակատագրական պատերազմի լուրջ բոպէներում։

Այդ հանգամանքները, այլ և այն, որ ապրանքների փոխադրութիւնը և մարդկանց հաղորդակցութիւնը զգալի կերպով կը դիւրանան, եթէ Վլադիկավկազի շրջանը միանայ Թիֆլիսի հետ, թելադրում են գործ դնել ամեն ջանք և միջոց՝ իրագործելու Կովկասեան լեռնընդմէջ երկաթուղու կառուցումը։

Անկասկած՝ այդպիսի մի երկաթուղու կառուցումը կը պահանջի կովկասեան լեռնաշղթայի մի քանի տեղերում շինել ստորերկրեայ անցքեր կամ տօննելներ, որոնք կունենան չափազանց երկար տարածութիւն, օրինակ՝ մի քանի տասնեակ վերստեր, և կը պահանջեն ահագին ծախքեր, բայց պետական անհրաժեշտութիւնը պէտք է հաշտվի մեծաքանակ ծախքերի հետ, հաշւի առնելով այն, որ նախ արագ հաղորդակցութեան և ապրանքների ընդարձակ փոխադրութեան վրա արված ծախքերը կարճ միջոցում ապահովվում են դրական հետևանքներով և երկրորդ՝ բացառիկ հանգամանքների ժամանակ հաղորդակցութեան բարենպաստ պայմանների մէջ լինելը ունի այնպիսի գերազանց առաւելութիւններ, որոնք գնահատվում են ոչ լոկ թւաբանական նկատումներով, այլ աւելի լայն պետական խորհրդածութիւններով։

Մենք հաղորդել էինք մեր ընթերցողներին, թէ անգլիական դրամատէրերի մի խումբ, ինժենէր Ստիւարտի ղեկավարութեամբ, նախաձեռնում է օգտվել Թերեք գետի արագավազ, սրընթաց և գահավիժող ջրերի ոյժից՝ կառուցանելու երկաթուղիական գիծ, որը պէտք է շարժվի էլեքտրական ոյժի զօրութեամբ։ Այդ ծրագիրը, անշուշտ, նոյնպէս ուշադրութեան կառնվի պաշտօնական յանձնաժողովի կողմից, որը այս անգամ պէտք է կարողանայ դրական պատասխան տալ, թէ ինչ միջոցներով և պայմաններով կարելի է գլուխ բերել կովկասեան լեռնընդմէջ երկաթուղու կառուցման գործը։

Ս. Քալանթար

ԹՈՒՐՔԻԱ ԵՒ ԻՏԱԼԻԱ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

13 սեպտեմբերի

Մալտա.—Կղզու մօտով անցան իտալական մի զրահանաւ, յետոյ երկու յածանաւ, դիմելով դէպի Տրիպօլիս։ Մալտա են գալիս ամեն օր իտալացիներ և այլ եւրոպացիներ Տրիպօլիսից։ Յատուկ շոգենաւ է վարձված եւրոպացիներին Տրիպօլիսից հեռացնելու համար։

—

Հռոմ.—Թիւրքաց դեսպանը երկար խօսակցութիւն ունեցաւ արտաքին գործերի մինիստրի հետ Տրիպօլիսի մասին։ «Տրիբունայի» ասելով, դրութիւնը ամեն բոպէ դառնում է աւելի լուրջ։ Տրիպօլիսաբնակ իտալացի գաղութը երկիւղ է կրում թիւրքերի թշնամութիւնից։

—

Բերլին.—«Կեօլնիշէ-Ցայտունգը» Տրիպօլիսի մասին ասում է. «Վէճի խաղաղ լուծման յոյսը դեռ չէ սպառված։ Պարզ է, որ Թիւրքիայի պարտականութիւնն է խուսափել այն ամենից, ինչ որ կարող է աւելի գրգռել Իտալիայի հասարակական կարծիքը, որը առանց այն էլ չափազանց գրգռված է։ Ռազմամթերքներով թիւրքական նաւեր Տրիպօլիս ուղարկելը առաջ է բերել իտալացիների դժգոհութիւնը»։

—

Կ. Պօլիս.—Վէզիրի և գերմանական կայսրի երկարատև տեսակցութիւնից յետոյ, կէս գիշերին, վէզիրի տան մէջ տեղի ունեցաւ մինիստրների խորհրդի արտակարգ նիստը։

«Աժանս-Օտտոմանը», հերքելով այն լուրերը, թէ իբր Տրիպօլիսի մահմէդականների մէջ բռնկվել է հակաիտալական ֆանատիզմ, պնդում է, թէ պաշտօնական շրջանները յոյս ունեն, որ դժուարութիւնները շուտով կը վերջանան և հնարաւորութիւն կը տան իտալական տնտեսական շահերին զարգանալ պայմանագրերի համապատասխան։

—

Կ. Պօլիս.—Իտալիայի հաւատարմատար Մարտինին Բ. Դրնից պահանջեց դադարեցնել զօրքեր ու ռազմամթերք Տրիպօլիս ուղարկելը։

Զէնքի է կանչվում ռեդիֆների առաջին զօրաբանակը։ Յամառ լուր է պտտվում, թէ իբր Իտալիայի ներկայացուցիչը այսօր Բ. Դրան ուլտիմատում է յանձնել։ Բ. Դրան և իտալական դեսպանատան մէջ յամառ լռութիւն է պահպանվում։ Միւս կողմից «Թանինի» խմբագրութիւնը տեղեկութիւն ունի, թէ իբր Աւստրիան պատրաստ է օգնել Թիւրքիային՝ Տրիպօլիսը Իտալիայի ոտնձգութիւնների դէմ պաշտպանելու համար։

Թիւրքական նաւատորմը Բէյրութից եկաւ Ալէքսանդրէտ։

Ներքին գործերի մինիստրը մամուլի ներկայացուցիչներին յայտնեց, որ Տրիպօլիսը իտալացիներից գրաւվելու լուրը վաղաժամ է, և խնդրեց չափաւորութիւն պահպանել լրագրական դատողութիւնների մէջ։ Զինւորական մինիստրը արգելեց տեղեկութիւններ տպել լրագիրներում զօրքերի տեղափոխութիւնների մասին։

Մինիստրների խորհուրդը նիստեր է գումարում, քննելով արտաքին դրութիւնը։ Միւս կողմից մայրաքաղաքում գտնվող պատգամաւորները խորհրդակցում են Հաջի-բէյի տանը։

—

Հռոմ.— Սօցիալիստները փորձեցին Հռոմում, Միլանում, Կոմօյում և Վարեզում ընդհանուր գործադուլ առաջ բերել ի նշան բողոքի ընդդէմ Իտալիայի Տրիպօլիսում հանդէս գալուն, սակայն փորձերը անաջող անցան հասարակական կարծիքի միահամուռ դիմադրութեան պատճառով։ Երկաթուղային ծառայողների կոմիտէն յորդորում է ծառայողներին ձեռնպահ մնալ գործադուլից։

—

Վիէննա.—«Նէյէ-Ֆրէյէ - Պրեսսէն» առաջնորդող յօդուածում գրում է. «Թիւրքիան պէտք է գիտենայ, թէ ո՛ր քաղաքականութեան և ո՛ր պետութեան շնորհիւ նա կորցնում է Տրիպօլիսը։ Նա կորցնում է այն՝ շնորհիւ եռապետեան համաձայնութեան մեծ պետութիւնների։ Տրիպօլիսը Թիւրքիայի համար կորած էր դեռ 10 տարի սրանից առաջ, երբ Իտալիան և Ֆրանսիան որոշեցին իրանց շահերի շրջանը Միջերկրական ծովի հարաւային ծովափում։ Գերմանիան և Աւստրո-Ունգարիան իրանց վրա ոչ մի պարտականութիւն չեն վերցրել Իտալիայի վերաբերութեամբ Միջերկրական ծովին վերաբերվող հարցերի առիթով։ Թէև Աւստրո-Ունգարիան և Գերմանիան չեն հակառակելու Իտալիայի գործողութիւններին, բայց և այնպէս նեցուկ կը լինեն Բ. Դրան»։

—

Վիէննա.—Տրիպօլիսի հարցի առիթով «Ֆատէրլանդը» գրում է, որ դէպի Իտալիան ունեցած դաշնակից յարաբերութիւնների շնորհիւ՝ Աւստրո-Ունգարիան արգելք չի լինի Իտալիայի սրա գործողութիւնների մէջ Տրիպօլիսում, սակայն կը տայ այնպիսի խորհուրդներ, որոնք կը նպաստեն հարցի հարթմանը։ Բայց և այնպէս լրագիրը խաղաղ լուծմանը այնքան էլ յոյս չէ դնում։

—

Վիէննա.—«Պօլիտիշէ-Կօրեսպօնդենցը» տպել է Հռոմից ստացված իտալական պաշտօնական վէրսիան Իտալիայի՝ Տրիպօլիսում հանդէս գալու մասին։ Այն ընթացքը, որ ստացաւ մարօկկեան հարցը Ֆրանսիայի և Գերմանիայի տարաձայնութիւնների պատճառով, նաև այն ենթադրութիւնները, որ միւս մեծ պետութիւնները կարող են ցանկութիւն տածել ընդլայնելու իրանց շահերի շրջանը Միջերկրական ծովի վրա, թոյլ չեն տալիս Իտալիային առաջվայ նման դանդաղեցնել Տրիպօլիսի հարցի լուծումը։ Աւելի արագ քայլերը ու աւելի իրական միջոցները՝ ձեռք առնված Իտալիայի Տրիպօլիսում գերակշռող դրութիւն ձեռք բերելու նկատումով՝ բացատրվում են ինքնապաշտպանութեան զգացմունքով։ Թիւրքիան միշտ էլ ժխտել է Իտալիայի իրաւունքները Տրիպօլիսում տնտեսական խնդիրներում և Իտալիային դրել է անհամեմատ աննպաստ կացութեան մէջ, քան միւս պետութիւններին։ Խաղաղ համաձայնութեան ուղին մնում է բաց։ Հռոմում յոյս ունեն, որ Բ. Դուռը չի մերժի իտալական պահանջները, ճանաչելով նրանց քննութեան արժանի։

«Վինէր-Ալգ.-Ցայտունգը» հաղորդում է, որ Թիւրքիան միջնորդութեան խնդրով չէ դիմել Աւստրո-Ունգարիային և Գերմանիային. այդպիսի դիմումի հիմք էլ չը կայ առ այժմ, քանի Իտալիան դեռ կօնկրէտ պահանջներ չէ առաջադրել Թիւրքիային։

—

Կեօլն. — «Կեօլնիշէ - Ցայտունգին» հեռագրում են Հռոմից, որ Թիւրքաց հաւատարմատարը իտալական արտաքին գործերի մինիստրին յայտնել է, թէ Թիւրքիայի ցանկութիւնն է վիճելի հարցերը լուծել վաղեմի բարեկամական ճանապարհով։ Մինիստրը իր կողմից մատնանշել է, թէ Իտալիայի համար անհնարին է հրաժարվել որոշակի պահանջներից. ընդամէն ցանկութիւն է յայտնել բարեկամական յարաբերութիւններ պահպանել Թիւրքիայի հետ։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

13 սեպտեմբերի

Պետերբուրգ.—Հէնց որ ֆրանսիական «Լիբերտէ» զրահանաւի խորտակման տեղեկութիւնը ստացուեց, Թագաւոր Կայսրը անմիջապէս ցաւակցական հեռագիր ուղարկեց Ֆալիէրին։

Պարիզ.—Մեծ Իշխան Ալէքսանդր Միխայլովիչը այցելեց Դելկասէին «Լիբերտէի» կորստեան առիթով։

Պարիզ.—Երեկոյեան Դելկասէն մեկնում է Տուլոն։

Յետագայ տեղեկութիւնների համաձայն, «Լիբերտէի» վրա սպանուել են 204, վիրաւորուել են 136 հոգի։ Բացի դրանից ուրիշ տասներկու նաւերի վրա թեթև վիրաւորուել են 48 հոգի։

Պարիզ.—Ծովային մինիստրութեան կէս գիշերին ստացած տեղեկութեան համաձայն, «Լիբերտէի» վրա սպանուել ու անհետ կորել են 350—400 մարդ։

Պարիզ.—Իզվոլսկին այցելեց Դեսելվին և հաղորդեց Կայսերական կառավարութեան ցաւակցութիւնը «Լիբերտէի» հետ պատահած դժբաղդութեան առիթով։

Պարիզ.—«Humanite»-ն տպել է սօցիալիստ-յեղափոխականների արտասահմանեան պատգամաւորութեան յայտարարութիւնը, թէ կուսակցութեան կենտրոնական կոմիտէն և նրան յարակից կազմակերպութիւնները ոչ մի մասնակցութիւն չեն ունեցել Բոգրովի գործում։

Բերլին.—Վոլֆը հաղորդում է, որ Մարոկկոյի վերաբերութեամբ կայացած համաձայնութիւնը էական կէտերում գոհացուցիչ է երկու կառավարութիւնների ցանկութիւններին, թէև առանձին յօդուածներում պահանջւում է խմբագրական որոշ փոփոխութիւն։

Լոնդոն.—Նաւահանգիստներում վերստին անկարգութիւններ ծագեցին։ Գործադուլ են անում 500 բանուոր։ Երէկ գործադուլի առիթով եղան լուրջ անկարգութիւններ Սվոնսում։ Ամբոխը խոշոր վնասներ տուեց։ Վիրաւորուեցին 10 ոստիկաններ։

Վիէննա.—Տեղի են ունենում չեխա[illegible]րոցները փակելու առիթով։

Պետերբուրգ. — Ստոլիպինի մահուան իններորդ օրը Տաւրիկեան պալատում կատարուեց հոգեհանգիստ մինիստրների խորհրդի լիակատար կազմի ներկայութեամբ և Կոկովցեվի գլխաւորութեամբ. ներկայ էին նաև Դումայի անդամներից շատերը։ Միւս եկեղեցիներում մատուցուեցին պատարագներ։

Կիէվ.—Միտրոպոլիտ Ֆլաւիանը զինուորական և քաղաքացիական անձերի ներկայութեամբ կատարեց հոգեհանգիստ Ստոլիպինի համար։

Թաւրիզ.—Քաղաքի պաշտպանների երկու օրուայ փորձը՝ քշել Ղարամելիք քաղաքամերձ գիւղից Շուջա-ուդ-Դօվլէի կողմնակիցներին՝ անաջող անցաւ. նրանք կորցրին մի քանի սպանուած ու տուին մի քանի գերի։

Որպէս պարզուեց, արևելագէտների XVI կոնգրէսը տեղի կունենայ Աթէնքում 1912 թւի մարտի 25-ին և ապրիլի 1-ին։ Ռուսաստանի բարձրագոյն դպրոցները և պետական հիմնարկութիւնները հրաւէր ստացան պատուիրակներ ուղարկել կոնգրէսը։ «Р.В.»

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԵՒՐՕՊԱԿԱՆ ԵՒ ԱՍԻԱԿԱՆ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԵԱՆՑ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԵՐԸ

I

Աշխարհիս վրա այսօր պարծենում է այն երկիրը, որի մէջ ծաղկած են վաճառականութիւնը, ինդուստրիան, գիտութիւնը և արուեստը։ Այս բոլորը միասին վեր առած՝ տալիս են մի ազգի այն ոյժը, որի միջոցով նա կարողանում է ձեռք բերել բարեկեցիկ կեանք։ Եւ յիրաւի՝ դրա օգնութեամբ պատւաբեր կերպով ձեռք են բերվում նիւթական միջոցներ, որոնցով իրագործվում են մի շարք կուլտուրական նպատակներ։

Եթէ ընդունում ենք, որ կայ նպատակ այս աշխարհիս վրա, հետևելով մենք էլ կասենք, որ դրան հասնելու համար անհրաժեշտ հարկաւոր է երկու պայման. առաջին՝ հարկաւոր է, որ մի երկիր մի որոշ կուլտուրական աստիճանի վրա կանգնած լինի. երկրորդ՝ այդ երկրի օրէնքներն անպայման արդար կերպով դիւրութիւն պիտի տան, որ ընդարձակ ծաւալ ստանան այդ կենսական ճիւղերը։ Այն երկիրները, որոնք զուրկ են այդ երկու պայմաններից և մինչև անգամ խոչընդոտ են լինում դրանց զանազան պատճառաբանութիւններով, դրանք պէտք է տեղի տան զարգացածներին և իրանք դառնան նրանց միջնորդը կամ ստրուկը։

Եւրոպայում գլխաւորապէս Անգլիան և Ֆրանսիան էին, որ գլուխ էին կանգնած այդ ճիւղերի մէջ, բայց 70-ական թւականից յետոյ Գերմանիան շնորհիւ իր տարած յաղթութեան յետ մղեց ուրիշներին և այսօր երկրորդ տեղն է բռնում Անգլիայից յետոյ։

Քառասուն տարուայ միջոցում Գերմանիայի բոլոր ջանքն այն էր, որ կարողանար տնտեսապէս տիրապետել աշխարհիս բոլոր շուկաներին։ Այդ մասամբ աջողվեց նրա։ Բայց Գերմանիան դրանով չէ բաւականանում, այլ անընդհատ և անխոնջ կերպով աշխատում է աւելի և աւելի առաւելութիւններ ձեռք բերելու։ Երկրագնդիս վրա ինչ հարց որ ծագում է, դուք կը տեսնէք, որ այդտեղ Գերմանիայի մատը կայ, լինի այդ հարցը քաղաքական և թէ տնտեսական։ Երկուսից էլ օգուտ է քաշում։ Համակրութիւն ձեռք բերելով ճնշված կամ վիրաւորված ազգերից, որ պաշտպան է հանդիսացել իրանց, եթէ քաղաքական հարցից օգուտ չէ քաղում, անշուշտ տնտեսական առաւելութիւններ կամ կօնցեսիաներ է ձեռք բերում։ Եւ իսկապէս այդ է իր ուզեցածը։ Քանի օր առաջ Վիլհէլմը ճառ արտասանելով՝ մատնանիշ արեց Գերմանիայի պատերազմական նաւատորմը, որի շնորհիւ այսօր Գերմանիայի առևտուրը պաշտպանվում է և օրէց օր ընդարձակ ծաւալ է ստանում աշխարհիս ամեն վաճառականական հրապարակներում։ Վիլհէլմը ճառում իր իսկական միտքը չէր յայտնում, քանի որ առանց այդ նաւատորմի՝ Գերմանիային 70-ական թւականներից աջողվում էր աշխարհիս ամեն անկիւններում տնտեսական առաւելութիւններ ունենալու։ Նաւատորմը ստեղծվեց գաղութներ ձեռք բերելու համար, մտնելով զանազան կոմբինացիաների մէջ այն երկիրների դէմ, որոնցից կարող էր յուսալ մի կտոր կորզելու՝ շնորհիւ այն համախմբումների, որոնք յարմար կարող էին լինել իրա համար։

Եւրոպայի առևտրական բոլոր երկիրներում օրէնքները մեծ դիւրութիւններ են տալիս վաճառականութեան կամ գործարանատէրերին՝ հանգիստ իրանց գործի ետևից գնալու. չը կան այն ձևականութիւնները, որոնք, բացի ժամանակ խլելուց, մարդուս մտատանջութեան մէջ են ձգում՝ սկսել թէ չը սկսել մի աչքադրած գործ։ Բացի այդ՝ օրէնքներն այնքան խիստ և արդար են քննում, որ ապահով կերպով կարող էք շարունակել ձեր գործը, վստահ լինելով որ ձեր իրաւունքն ամենայն ճշդութեամբ կը պահպանվի դատարաններում։

Այսպէս ապահովված արտօնեալ օրէնքներից և իրանք էլ մի որոշ կուլտուրական աստիճանի վրա կանգնած՝ Եւրոպայի առևտրական տները հսկում են իրանց գործունէութիւնը։

Մի գաղափար տալու համար՝ բերենք մի քանի եւրոպական և ասիական գործելակերպեր, որոնցից ընթերցողը համեմատութիւն անելով ինքը կարող է եզրակացնել, թէ ում պէտք է հետևի, որ հասնի մի ցանկալի հետևանքի։

Առ հասարակ Եւրոպայի առևտրական տները, շատ քիչ բացառութեամբ, բաղկացած են լինում երկու-երեք կամ աւելի շատ ընկերներից, և՝ շնորհիւ այս ընկերութիւնների՝ բացի իրանց մէջ ունեցած առաւելութիւններից՝ յաչս շրջակայի և օտարների աւելի ապահովութիւն են ներշնչում։

Դրանց գլխաւորները լինում են հմուտ, գործունեայ, արտուես և նուիրված են լինում գործին։ Իրանց համբերատար գործունէութեամբ մի առանձին բաւականութիւն են զգում, երբ գործը բարգաւաճում է։

Իրանց քաղաքներում կամ երկրում տեղեակ են ամեն բանի ինչ վերաբերում է իրանց առևտրին. բացի դա՝ աշխարհիս ամեն տեղերից տեղեկութիւն ունեն, թէ ինչ է անցնում այնտեղ. եթէ մի ձեռնտու գործ է պատահում, մարդ (commis-voyageur) են ուղարկում հաստատ ինստրուկցիաներով. և եթէ յարմար են գտնում գները, իսկոյն անում են։

Ոչ մի առևտրական տան գլխաւորին չէք տեսնի անփորձ երիտասարդ, թէկուզ դրա դրամագլուխն էլ լինի աւելի շատ, քան միւս անդամներինը. գլխաւոր գործակատարն էլ պէտք է լինի փորձված և այդպիսի մարդու համար էլ ամեն ջանք են բանեցնում իրանց մօտ բերելու ուրիշ տներից՝ ռոճիկն աւելացնելով։

Մաքսատան գործերը կատարվում են ամենաարագ կերպով. դրա վերաբերեալ թղթերը յանձնում են իրանց տան բանկիրին, որ ստանալով ապրանքները յանձնում է գրասենեակին։

Երկաթուղուց ապրանք ստանալու, ուղարկելու, ամբարներից ապրանքներ տեղափոխելու և այլն յանձնում են բանկիրին, որ կատարում է ճշդութեամբ և առանց ժամանակ կորցնելու։

Մի առևտրական եթէ միւսի մասին տեղեկութիւն ուզենալու լինի, պէտք է դիմի իր բանկիրին, որը ունի մանրամասն կատարեալ տեղեկութիւն ամեն տների վերաբերեալ։ Երկու ծանօթ վաճառականներ կամ ֆաբրիկանտներ իրար պատահած ժամանակ եթէ մէկը դրանցից մի երրորդի վրա, որ բացակայ է, վատ խօսի կամ անուանարկի, դրանով արդէն իրան ցածացրած է լինում միւսի աչքում և վատը ինքն է դառնում։ Այս սովորութիւնը օրէնքի նման մի բան է դառել, և սա ընդունված է ոչ թէ միայն առևտրականի կամ գործարանատէրերի մէջ, այլ անհատների մէջ։ Ոչ ոք իրաւունք չունի մի երրորդի վրա վատ խօսելու, քանի որ նա բացակայ է։ Ահա այս հանգամանքումն է, որ զանազանվում են եւրոպացին և ասիացին, որից մէկը առաջ է գնում, միւսը յետ է գնում։ Այս երևոյթի մասին շատ բան կայ գրելու, բայց շատ կերկարի։ Առիթ պատահած ժամանակ կը գրենք։

Եւրոպայի առևտրական տներում դուք երբէք չէք նկատի պրոտեկցիա և խնամիական ձգտումներ. նրանք փնտռում և ցանկանում են արժանաւոր, խնայող և փորձված մարդիկ տեսնել իրանց գործերում։ Մի տան անդամների որդին՝ առևտրական ուսումն աւարտած՝ հօր կամքով գրասենեակում ծառայում է ցածր պաշտօններում. հետզհետէ նրա պաշտօնը բարձրացնելով եթէ հասնում է մի որոշ հմտութեան, հայրն այն ժամանակ կամաց-կամաց նրան պատրաստելով իր տեղը բռնելու՝ հեռանում է և յանձնում է որդուն մերթ ընդ մերթ յաճախելով գրասենեակը։

Շնորհիւ այս սիստեմի անվայել շռայլութիւններ, կործանիչ ծախսեր հազուագիւտ են Եւրոպայում. այս պատճառով էլ դուք տեսնում էք, որ առևտրական տների գոյութիւնը շարունակվում է 100—500 և աւելի տարիներ։

Եւրոպացին գործ սկսած ժամանակ՝ նրա միտքն այն չէ, որ կարճ միջոցում ամեն անհաշիւ գործերի մէջ մտնելով շուտով հարստանայ։ Նա համբերող է, տոկուն է, աշխատասէր է և տարիների ընթացքում ամրապնդվելով դառնում է խոշոր տուն, կրեդիտն աւելանում է, ամեն բաներում նա ընդունված է և ստանում է մի պատուաւոր տան համբաւ։

Եւրոպական տներն երբէք խարդախութեան չեն դիմում. նրանք մրցում են. մէկը միւսի ձեռից որ գործը խլում է, դա նշանակում է, որ մէկը աւելի արագ է գործել, հմուտ է, հարկաւոր տեղեկութիւնները շուտով է ձեռք բերել. եթէ այդ տները խարդախութեան դիմէին, կը կորցնէին իրանց պատուաւոր անունները և երբէք չէին կարող այն հսկայական գործերը անել և կը մատնվէին դրանք կատարեալ անգործունէութեան։

Եւրոպացիք երբ կազմում են առևտրական տներ, բոլոր կազմով աշխատում են ընկերութեան օգտին. նրանք այնքան կանոնաւորված են, որ գողութիւն անել միմեանցից անհնարին է. և եթէ դրսից պատահի մի այդպիսի հանգամանք, նրանք կը դնեն այդ ընկերութեան մէջ։ Ընկերութեան գաղափարը և նշանակութիւնը լաւ են ըմբռնած։ Օրինակի համար, մի վաճառական միւսի վրա ապրանք է ուղարկում, եթէ գին նշանակի, այդ նշանակած գնից որչափ աւելի ծախի, այդ վաճառողի օգուտն է, և դա ընդունված սովորութիւն է. բայց առհասարակ չեն օգտվում այսպիսի հանգամանքից։ Նոյն ապրանքի վրա ծախսեր եղած ժամանակ՝ ծախողը բեռնակրի և այլ ծախսերը մի քիչ աւելի են նշանակում, դա էլ այն պատճառով է, որ շատ անգամ անպատեհ ծախսեր են լինում, որ յարմար չէ հաշւում դնել, դրանով ծածկվում է անպատեհ եղած ծախսը։

Մեզ շատ հեռու կը տանէր աւելի մանրամասնութեանց մէջ մտնել։ Բաւականանանք այս գլխաւոր գործելակերպերից և ասենք, որ շնորհիւ եւրոպական օրէնքների և կուլտուրայի՝ վաճառականութիւնը, ինդուստրիան այն աստիճանի վրա է կանգնած, որ ամենքը պարծենալով և ուրախութեամբ ասում են, թէ «մենք վաճառական կամ ֆաբրիկանտ ենք»։ Այս ճիւղերը այն աստիճանի գրաւիչ և համակրական են, որ թէ ինժեներները, թէ փաստաբանները, թէ բժիշկները և այլք ուրախութեամբ կը ցանկային լինել նրանց տեղը։ Բալթ. Քալ.

(Կը շարունակվի)

ԸՆԹԵՐՑՈՂԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ

VII

Մօտ մի ամիս առաջ «Մշակի» մէջ տպագրված էին երկու թղթակցութիւններ, մէկը՝ Բագուից, իսկ միւսը՝ մի քանի օրից յետոյ՝ Նուխուց, և երկուսն էլ միևնոյն անցքի շուրջը պտտվող։

Շատ քչերն են երևի ուշադրութիւն դարձրել այդ երկու թղթակցութիւնների մէջ եղող սերտ կապի վրա, իսկ ընթերցողների մեծամասնութիւնը երևի նոյնիսկ բոլորովին չի էլ մտածել նրա մասին։

Եւ սակայն արժէր մտածել։

Արժէր, որովհետև նա պարզ կերպով ցոյց է տալիս մեր կեանքի ժահրոտ վէրքերից մէկը իր ամբողջ մերկութեամբ՝ աւելի պարզ ու հասկանալի կերպով, քան թէ այդ կարող էր անել ուրիշ որևէ բան։

Կարդացէք, ընթերցող, նորից կարդացէք այդ երկու թղթակցութիւնները և փոքրինչ մտածեցէք նրանց վրա, վերլուծեցէք մեր կեանքի պատկերը ցոյց տուող այդ երկու դօկումենտն էլ։

Թղթակցութիւններից առաջինը գրված է Բագուից, ուր թղթակիցը նկարագրում է մի աղքատ նուխեցի ուսանողի մահը հիւանդանոցում և ի միջի այլոց պատմում է նրա կեանքի մանրամասնութիւնները։

Աւարտելով միջնակարգ դպրոցը, ուսանողը նիւթական միջոցներ չունէր բարձրագոյն դպրոց մտնելու։ Եւ ահա նրա համաքաղաքացի երիտասարդներն ու ընկերները դրդում են նրան շարունակելու ուսումը, խոստանալով իւրաքանչիւրը ամսական որոշ գումար տալ և այդպիսով ընդհանուր ոյժերով նրա համար ապրուստի միջոց ճարել, և ոգևորված այդ յոյսերով, ոգևորված ապագայի փայլուն երազներով՝ երիտասարդը դիմում է դէպի հեռաւոր հիւսիս և մտնում համալսարան։

Անցնում են մի քանի ամիսներ։

Աջակցութիւն խոստացողները պարբերաբար ամսական որոշ գումար են ուղարկում նրա համար, ինքն էլ եռանդուն կերպով գործի է կպչում, աշակերտներ պատրաստում և այդպիսով՝ որոշ չափով ապահոված վիճակով՝ ամբողջովին նուիրվում է իր ուսմանը։

Բայց...

Խոստանալը հեշտ է, իսկ կատարելը դժուար...

Հանդիսաւոր խոստումը շատ շուտ է մոռացվում, և հէնց առաջին իսկ տարուայ կէսին «ընկերները» դադարում են փող ուղարկելուց, դրժում են իրանց խոստումը, մի անելանելի դրութիւն ստեղծելով խեղճ ուսանողի համար։

Եւ որպէսզի ուսումից չը զրկվի, որպէսզի մի կերպ ուսումնական տարին վերջացնէ՝ նա ստիպված է լինում կիսաքաղց կեանք վարել, շատ անգամ ցամաք հացով կերակրվել, ոյժերն ամբողջովին վատնելով կողմնակի դասերի վրա։

Եւ մտաւոր ու ֆիզիքական ոյժերի այդ սոսկալի վատնումը, կիսաքաղց դրութիւնը և ապագայի վրա մտածմունքը հասցնում են նրան հիւանդութեան դուռը։

Նա թոքախտ է ստանում...

Ուսման ծարաւը թոյլ չէ տալիս նրան թողնելու համալսարանը, իսկ առանց բժշկվելու մնացած հիւանդութիւնը օրէց-օր առաջ է գնում, և արձակուրդներին Բագու գալով՝ նա այլևս չէ կարողանում անկողնից վեր կենալ։

«Ընկերները» մի կերպ աջողեցնում են տեղաւորելու նրան Բալախանիի նաւթարդիւնաբերողների խորհրդի հիւանդանոցում, բայց չը նայած բժիշկների գործ դրած բոլոր ջանքերին, քայքայված օրգանիզմը չէ կարողանում դիմադրել սոսկալի ախտին, և նա... մեռնում է...

Մեռնում է, կրծքի մէջ ամուր պահած ունենալով ուսման անշէջ ծարաւը։

Մեռնում է, և ահա նրա դեռևս տաք դիակի շուրջը սկսվում է հայկական սովորական տրագի-կօմեդիան։

«Ընկերները» իսկոյն ևեթ դես ու դէն են ընկնում, փող հաւաքում, փառաւոր դագաղի մէջ ամփոփում նրա մարմինը և ուղարկում Նուխի։

Այդտեղ էլ՝ սկսված կօմեդիան շարունակվում է, որի նկարագրութիւնն է տալիս «Մշակի» Նուխու թղթակիցը։

Դիակը դիմաւորում են Նուխում հարիւրաւոր «ընկերներ» ու «ծանօթներ», բազմաթիւ պսակներով զարդարում և մեծ շուքով հողին յանձնում...

Հայկական սովորական տրագի-կօմեդիաներից մէկը։

Եւ եթէ մեռելները յարութիւն առնելիս լինէին, եթէ իրանց մահվանից յետոյ գոնէ մի րօպէ նրանք կարողանային դուրս գալ գերեզմանից, միթէ խեղճ, ցաւագար ուսանողը իր դագաղը շրջապատող «ընկերների» ու «ծանօթների» երեսին չը պիտի տար, չը պիտի բողոքէր այդ ամենը։

Երբ մարդը կենդանի էր, և ուսման ծարաւ, օրվան հացից էր զրկւում իրան այդ ծարաւը յագեցնելու համար, նրա համաքաղաքացի ընկերները, որոնք չաղ պաշտօններ ունեն Բագու և Բալախանի, գլանում էին իրանց մի քանի կոպէկներով օգնելու նրան, իսկ մեռնելուց յետոյ փառաւոր, չը տեսնված շուքով են թաղում նրան։

Մի թաղում, որի ծախսը ամբողջ 2 տարի կը բաւականանար խեղճ ուսանողին ուսումը շարունակելու և մարդավարի ապրելու համար։

Քաղցած մեռցնել

Եւ

Փառաւոր թաղել...

Միշտ և ամեն տեղ պէտք է արդարացնենք մենք հայկական այդ սովորական, խայտառակ դեվիզը, մեր կեանքի այդ ժահրոտ վէրքը...

Բայց մինչև երբ։ Վ. Թումանեան

ԲՈԳՐՈՎԻ ԳՈՐԾԸ

«Нов. Вр.» լրագիրը հաղորդում է, որ օգոստոսի 26-ին ցերեկով անձնասպանութիւն գործած յեղափոխական Մուրավիեւը Բոգրովի համախոհն էր։ Նրան տեսել են, երբ նա լինում էր Բոգրովի մօտ։ Երբ Մուրավիեւը անձնասպանութիւն գործեց պահնորդական բաժանմունքի մէջ, 2—3 ժամից յետոյ Կուլեաբկոյի մօտ եկաւ Բոգրովը և առաջարկեց իր ծառայութիւնները հսկելու Պետերբուրգից եկած յեղափոխականների վրա, որոնք իբր թէ իջևանել էին իր բնակարանում։ Բոգրովին իսկոյն հաւատացին. Բոգրովի երկրորդ տեսակցութիւնը տեղի ունեցաւ պահնորդական բաժնի ղեկավարների հետ «Եւրոպէյսկայա» հիւրանոցում, գնդապետ Սպիրիդովիչի սենեակում։ Ըստ երևոյթին, սպանութիւնը պէտք է կատարէր Մուրավիեվը, իսկ Բոգրովը միայն ղեկավարի դեր պէտք է կատարէր։ Երբ Մուրավիեվը բռնվեց, այն ժամանակ տէրրորիստական գործողութեան ի կատար ածումն յանձն առաւ Բոգրովը։ Հաւատալով Բոգրովի սուտերին, Կուլեաբկոն և Սպիրիդովիչը ոչինչ չը ստուգեցին։ Փոխանակ կարծեցեալ տէրրորիստներին կալանաւորելու Բոգրովի բնակարանում, պահնորդական բաժնի ղեկավարները որոշեցին բռնել նրանց ենթադրեալ յանցագործութեան տեղում, վճռելով որ այդպէս աւելի էֆֆէկտ կունենայ։ Նրանց վրա հսկելու դերը յանձնվեց Բոգրովին։ Կասկածից դուրս է համարվում, որ Բոգրովը սկսած 1906 թւից բոլոր ժամանակ պահնորդական բաժնի անդամ էր և յիրաւի մատնել է աչքի ընկնող յանցաւորներից շատերին։ Երբ Բոգրովին մերկացրին, այն ժամանակ սօցիալիստ-յեղափոխականների կուսակցութիւնը առաջարկեց նրան ընտրութիւն անել՝ մահվան պատժի կամ Ստոլիպինի սպանութիւնը։ Բոգրովը ընտրեց վերջինը, յուսալով որ որևէ կերպով կը փրկվի։

«ՆԱԽԼԷԲՆԻԿՆԵՐ»

Ուսումնական տարին սկսվելու հետ գաւառներից Թիֆլիս է թափվում և բոլոր ուսումնարանների բակերը լցնում ուսումնածարաւ գիւղացի երեխաների անհաշիւ բազմութիւն։ Թէ քանիսը այդ երեխաներից և ինչ դժուարութեամբ բաղդ է ունենում ուսումնարան ընդունվելու և կամ որչափ մեծ է լինում չընդունված, քառ ու փոշման վերադարձողների թիւը, դա, որքան էլ դառն, բայց ընդհանրացած իրողութիւն է, որի հետ կարծէք բոլորս էլ ակամայից հաշտված լինենք։ Կայ սակայն և մի ուրիշ, ոչ պակաս անմխիթարական իրողութիւն, որ և արժանի է լուրջ ուշադրութեան երեխատէր ծնողների կողմից։

Դա ուսումնարան ընդունված գաւառացի աշակերտ-երեխաների քաղաքում ապրելու հարցն է։ Թէ ուսումնարանների բակերում և թէ մետրիկական ստանալու համար կօնսիստորիայի դուռը հաւաքված աշակերտատէր ծնողներին մօտենում են «էժան գնով նախլէբնիկներ» ընդունող զանազան կանայք և հարցնում. «Պահելու երեխէք չունէք, ախպէր»։ «Պահելու երեխէք», ի հարկէ, լինում են, և գիւղի աշխատանքների եռուն ժամանակ առանց այն էլ քաղաքում շատ օրեր կորցրած երեխատէր գաւառացին մի կերպ պայմանաւորվում է այդ պատահական կանանց հետ, երեխային «պահ տալիս» և ինքը գիւղ շտապում։

Բաղդաւոր է այն երեխան, որի պահող ընտանիքը ընդունակ է գտնվում երեխային կանոնաւոր կերպով ապրեցնելու և դասերը պատրաստելու հնարաւորութիւն տալու։ Իսկ ընդհանրապէս այդ փոքրիկ «նախլէբնիկների» մեծամասնութեան համար ստեղծվում են կեանքի այնպիսի դժոխային պայմաններ, որ նրանք, մինչև «իրանց բաղդի հետ հաշտվելը», ենթարկվում են հոգեկան տանջանքների, դրա հետ միասին և զրկվում դասեր պատրաստելու հնարաւորութիւնից։ Տանը բանեցնելը, տան ղալմաղալը, նաև թէ թանգութեան պատճառով լամպի շուտ հանգցնելը, կոպիտ վերաբերմունք և այլն. ահա մի շարք աննպաստ պայմաններ, որոնք սկզբից ևեթ մեռցնում են փոքրահասակ աշակերտի մէջ թէ սովորելու եռանդը և թէ վստահութիւնը։ Սրանց էլ գուցէ դիմանար աշակերտը։ Սակայն կայ և մի ուրիշ երևոյթ, որ աւելի շուտ և աւելի վատ է ազդում «նախլէբնիկների» վրա։ Դա «քաղաքավարի» կերպով հաց տալն է և «ժամանակին» ճաշելը։

Այն ընտանիքներում, որտեղ հացը «քաղաքավարի» է տրվում, այսինքն այնքան քիչ, որ «նախլէբնիկները» առանց «խլէբի» մնալով՝ մնում են քաղցած, այդպիսի ընտանիքներում պահվող երեխայքը կամ քաղցից տանջվում են, կամ «փոքրիկ գողութիւններ» անում, և կամ գրքերի անունով հօրից ստացած կոպէկներով շուկայում որևէ բան առնում և քաղցը յագեցնում...

Աւելորդ մանրամասնութիւնների մէջ մտնել կարևոր չեմ համարում. տխուր փաստն այն է, որ յիշածս արգելառիթ երևոյթները, որքան էլ նրանք շատերի համար աննշանակալի թւան և նշանակութիւնից զուրկ, միանգամայն զրկում են յիշածս «նախլէբնիկ» աշակերտներին կանոնաւոր կերպով ապրելու և դասեր պատրաստելու հնարաւորութիւնից և այդպիսով զօրեղ կերպով նպաստում դասարաններում մնալու և վերաքննութիւններ ունենալուն...

Թերևս այդ արգելառիթ երևոյթների դառն հետևանքներից ազդված լինելն է պատճառ, որ գիւղացի աշակերտատէր ծնողները ուսումն. տարուայ միջոցին գալիս են քաղաք իրանց երեխաներին պահելու։

Բայց գալու հնարաւորութիւն և միջոց ունենում են շատ քչերը և մեծամասնութեան համար դրութիւնը մնում է նոյնը։ Այդպիսիներին էլ փորձը սկսել է ուրիշ ճանապարհ սովորեցնել, որը թէև դեռ չէ ընդհանրացած։

Գաւառացի երեխատէրերը պայմանաւորվում են քաղաք եկած ծնողների հետ, յանձնում մի քանի աշակերտ և այդպիսով կազմում դուս [illegible]կերտական ընտանիք, ուր թէ առանց խանգարվելու պարապելու հնարաւորութիւն է տրվում աշակերտներին և թէ, որ գլխաւորն է, ազատվում են «նախլէբնիկներ» ընդունող պատահական և «յոյժ քաղաքավարի հաց տուող» կանանց խնամքին յանձնվելուց։

Այսպէս թէ այնպէս, գաւառից քաղաք երեխայ բերող ծնողները պէտք է ամենալուրջ կերպով վերաբերվեն երեխայ «պահ տալուն» և ստեղծեն նրանց համար այնպիսի պայմաններ, որ կարելի լինի առանց անտեղի արգելքների դասերին նուիրվել։ Այլապէս թէ արած ծախսերն են ի զուր կորչում և թէ երեխաները հոգեկան տանջանքներից ճնշվում։

Խղճացէք ձեր երեխաներին։

Բ. Մկրտումեան

ԳԻՒՂԱՏՆՏԵՍՈՒԹԵԱՆ ՆՈՒԱՃՈՒՄՆԵՐԸ ՄԵՐ ԿԵԱՆՔՈՒՄ

Անդրկովկասի հայ ազգաբնակութեան ամենազգալի և առաւելագոյն տոկոսը կազմում է գիւղացիութիւնը։

Ընթերցողներից բոլորի համար էլ պարզ է այն խղճուկ կացութիւնը, որի մէջ ներկայումս հալվում ու մաշվում է բանւոր գիւղացիութիւնը։

Համեմատելով հայ գիւղացիութեան դրութիւնը շվէյցարական գիւղացիութեան հետ, կը տեսնենք այն խոշոր կոնտրաստը, որ առաջին հայեացքից պատկերանում է մեր առաջ։

Մինչ առաջինը, ինչպէս ասացինք վերը, ապրում է ոչ նախանձելի պայմաններում, երկրորդը, դրան հակառակ, գիւղական մթնոլորտում վայելում է գրեթէ այն բոլոր մեծամեծ յարմարութիւնները, որոնք մեզանում, կարելի է ասել, միայն մեծ քաղաքների, այն էլ մի որոշ դասի, բնակչութեանն են վիճակված։

Շատ են դրանց պատճառները. և այդ պատճառների քննութեան մէջ մենք շատ հեռուն կը գնանք. միայն վերցնենք մի հանգամանք, որ այնքան շօշափելի և այժմէական է դարձել հայ գիւղացիական կեանքի մթնոլորտում։

Հայ գիւղացիութիւնը, ինչպէս գիտեն ընթերցողները, դեռ ևս վարում է մի նահապետական յետամնաց կեանք, որը, իր հերթին, ոչ պակաս բացասական ազդեցութիւն է ունենում գիւղատնտեսութեան և հետևապէս հայ գիւղացու տնտեսական կացութեան, ապրուստի վրա։

Մեր խօսքը վերաբերում է այն հնացած միջոցների և եղանակների մասին, որոնցով մինչ օրս վարում է իր տնտեսութիւնը հայ գիւղացիութիւնը։

Անմտութիւն կը լինէր հանդէս գալ պաշտպանելու այն հնաւանդ, նահապետական եղանակները, որոնցով տարիներ շարունակ ղեկավարվել է հայ բանւոր գիւղացիութիւնը, և որոնց շնորհիւ, մասամբ, նա գլորում է մի կեանք, որ իր բազմաթիւ տխուր և սրտաճմլիկ կողմերով գրեթէ շատ քիչ է զանազանվում նախապատմական ժամանակների մարդկանց վարած կեանքից։

Բայց այսօր սրտի անհուն ուրախութեամբ պիտի շեշտել այն շարժումը, այն եռուն ստեղծագործող, վերակենդանացնող աշխատանքը, որ տարվում է հայ գիւղացիութեան մէջ։

Փլվում են դարերով անցած խարխուլ շէնքերը, կորչում՝ դարերով սնուցած և իր մէջ խեղդված մտրմունքները և վերջապէս փշրվում այն շղթաները, որոնք հայ գիւղատնտեսութիւնը կաշկանդում և պահում էին իր նախնական, անկազմակերպ, սաղմային դրութեան մէջ։

Ողջունել կարելի է հայ գիւղատնտեսութեան ռահվիրաների սկսած և արդիւնաւոր աշխատանքը, որի շնորհիւ բացվում են հայ գիւղացու աչքերը և որով ծանօթանում է նա այն կատարելագործված եղանակների և գործիքների հետ, որոնք վաղուց արդէն մուտք են գործել քաղաքակիրթ երկիրներում։

Լրագիրները ամեն օր մեզ լուրեր են բերում գաւառներից, ուր, շնորհիւ մի քանի յարգելի գիւղատնտեսների, ինչպէս օրինակ Ա. Քալանթարի, Ա. Աթանասեանի, Խ. Երիցեանի, Գ. Մուրադեանի և այլոց, կատարվում է մի զգալի փոփոխութիւն, մի ուրախալի երևոյթ, որոնք մեծ նշանակութիւն և բարերար ազդեցութիւն են ունենում գիւղատնտեսութեան վրա։

Էլ չենք յիշում գիւղատնտեսական դըպրոցների հիմնաւորումը, դասընթացքները Ղարաքիլիսայում, փորձադաշտերը, դասախօսութիւններն ու ժրաջան գործունէութիւնը. շեշտենք վերջերս տեղի ունեցած գիւղատնտեսական մեքենաների դեմօնստրացիաները՝ Ղարաքիլիսայում, Դղլաղում, Վօրօնցովկայում և այլն, որոնք այնքան աջողութիւն ունեցան, մեծ հիացմունք պատճառեցին ներկայ եղող գիւղացիներին և իրանց վրա դարձրին տեղական մամուլի մի շարք օրգանների ուշադրութիւնն ու համակրական վերաբերմունքը։

Կասկած չը կայ, որ կատարելագործված մեքենաների մուտքը մեծ յեղաշրջում առաջ պիտի բերի գիւղատնտեսութեան կեանքում. և այդ դեմօնստրացիաներն ու աշխատանքը նոր դարագլուխ են կազմում հայ նահապետական գիւղատնտեսութեան համար։

Գովելի է երկրագործական մեքենաների «Ակսայ» ընկերութեան Կովկասի լիազօր Գայֆէջեանի համեստ աջակցութիւնը Թիֆլիսի Հայ Գիւղատնտեսական և Տնայնագործական Ընկերութեանը, որին նուիրել է նա նոր սիստեմի երկրագործական գութան և յանձնել հնձիչ մեքենան վերոյիշեալ դեմօնստրացիաների համար։ «Ակսայ» հնձիչ մեքենայի ունեցած կատարեալ աջողութիւնը պարզ ապացոյց է կատարելագործված մեքենաների առաւելութեանը նահապետական եղանակների հանդէպ։ Միւս կողմից Ընկերութեան այդ աջակցութիւնը գրաւական է հէնց իր յետագայ նուաճումների տեսակէտից։ Գաճ.

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Հացահատիկների գնի արհեստական բարձրացում

Խանքենդ, 6 սեպտեմբերի

Անցեալ շաբաթ մի քանի օր իրար վրա անձրև տեղաց։ Եղանակները բաւականին փոխվել են. կարծես աշունը սկսվել է. գիշերները պարզ է լինում երկինքը և շատ ցուրտ։ Շրջակայ գիւղօրայքի կալոցը վերջանալու վրա է։ Մեր շրջանի հացի բերքը այս տարի ընդհանուր առմամբ բաւարար չէ։ Ինչպէս պատմում են Աղդամի Թուրքերը, այս տարի պակաս է և խաղողի բերքը։ Աղդամում ցորենի պուդը ծախվում է 1 ր. 60 կ., գարու պուդը՝ 90 կ., իսկ Ռուսաստանի ալիւրի գները օր ըստ օրէ բարձրանում են. պուդը հասել է 2 ր. 40 կ.։ Թուրքերը առարկում են, որ տեղական ցորենի գինը բարձրացնողը՝ կապալառուներն են, որոնք թէ իրանց և թէ իրանց ագենտների միջոցով աշխատում են առանց սակարգութեան՝ գների մէջ՝ ցորեն, գարի հաւաքել։ Անցեալ կիրակի «բազար» օրը Աղդամի ոստիկանութեան հրամանով արգելվել է կապալառուներին, ներկայ լինել, որի պատճառով ցորենի պուդը 20 կոպէկով իջել է։

Երանի թէ միշտ այդպէս վարվէր ոստիկանութիւնը։ Ա. Ասլանեան

Երեք աշակերտի մէկ ուսուցիչ

Քիշընեվ, 3 սեպտեմբերի

Ամսիս 5-ից տեղիս հայոց ծխ. դպրոցում սկսվելու են կանոնաւոր դասերը։ Աշակերտների թիւն է 9, իսկ ուսուցիչներինը՝ 3։ Աշակերտներից 4-ը ժամկոչ Մարգարի երեխաներն են, ինչպէս յայտնեց մեզ ուսուցիչներից մէկը։ Թէև Քիշընեվի 100 տուն հայութիւնը իր դպրոցին պիտի տար գոնէ 30—40 երեխայ, բայց 9 հոգու համար դպրոց պահելն էլ մի պատիւ է տեղիս հայ համայնքի համար։ Սկզբունքով հայ եկեղեցին պիտի ունենայ և հայ դըպրոց։ Կովկասի շատ հայաբնակ քաղաքները թող օրինակ առնեն Քիշընեվից։

Խաչ. Տէր-Ենօքեան

Եկեղեցու վերանորոգութիւն

Լագոդաղ, 9 սեպտեմբերի

Տեղիս հայոց եկեղեցու անշուք լինելու մասին առիթ ենք ունեցել գրելու «Մշակում»։ Այժմ ուրախութեամբ հաղորդում ենք, որ եկեղեցին հիմնաւորապէս վերանորոգվում է։ Շուտով կունենանք գեղեցիկ, կոկիկ եկեղեցի։ Եկեղեցու վերանորոգութեան ծախսը նստում է 2000—3000 ր.։ Շնորհակալութեան արժանի է նոր երէցփոխ Յովհ. Յարութիւնեանը, որը մեծ ջանքեր թափեց այս գործի համար։ N. N.

Հոգեհանգիստ Ստոլիպինի յիշատակին

Գանձակ, 9 սեպտեմբերի

Այսօր, ցերեկվայ ժամը 2-ին, նահանգապետի կարգադրութեամբ ռուսաց տաճարում հոգեհանգիստ կատարվեց մինիստրների խորհրդի նախագահ՝ Պ. Ա. Ստոլիպինի հոգու փրկութեան համար։

Հոգեհանգստին ներկայ էին բոլոր պետական և դպրոցական հիմնարկութիւնների պաշտօնեաները և կառավարիչները, նաև հայոց հոգևոր կառավարութեան կազմը՝ գլուխ ունենալով փոխանորդին։ Հոգեհանգիստը վերջացաւ մօտ ժ. 3-ին, որից յետոյ ժամւորները ցրվեցին։ Գր-Գօ

Ծխ. դպրոցի վերաբացումը

Կրասնովոդսկ, 10 սեպտեմբերի

Ամսիս 4-ից սկսված է տեղիս ծխ. դըպրոցի նորեկ աշ.-աշակերտուհիների ընդունելութիւնը. ուսուցչ. խումբը պատրաստ է արդէն։

Ամսիս 13-ից կը սկսվեն կանոնաւոր պարապմունքները։ Դպրոցի և ուսուցչական կազմի համար մի այլ անգամ։ Զ.-Էն

ԳՈՐԾ Է ԿԱՏԱՐՎՈՒՄ

Գօրիս, 25 օգոստոսի

Քաղաքումս այժմ որ գործ ենք տեսնում նոր քաղաքագլխի և ձայնաւորների կողմից։ Քաղաքի բարեկարգման և մաքրութեան վրա մեծ հոգս է տարվում. ինքնավարութեան մէջ ժողովները միանգամայն կանոնաւոր են և քաղաքացիների համար մուտքը ազատ ինքնավարութեան դահլիճը, որը առաջներում մեզանում գոյութիւն չունէր։ Ամսիս 24-ին երեկոյեան տեղի ունեցաւ երրորդ նիստը, ուր ի միջի այլոց քաղաքագլխի կողմից հարց դրվեց նախկին կազմի օրօք քաղաքիս արևելեան և հարաւային մասերում ազատ հողերի վրա շինված տների վերցվելու մասին։ Հարցը շատ դժուարին էր. մարդիկ օգտվելով ինքնավարութեան թուլութիւնից, քաղաքի ազատ հողերի վրա, որոնք մնալու էին իբրև ազատ տարածութիւն, շինել են մի շարք տներ, տեղաւորվել և ապրում են, իսկ այսօր քաղաքի ինքնավարութիւնը միանգամայն ապօրինի գտնելով յիշեալ հողերի սեփականացումը՝ տները վերացնելու հարց է դնում։ Երկար ու բարակ վիճաբանութիւնից յետոյ, ձայնաւորները խնդրեցին այդ հարցը յետաձգել ապագայ նիստերին դնելու, երբ բոլոր ձայնաւորները կը լինեն և հարցը կը քննվի բազմակողմանի կերպով։

Նոյնիսկ կարծիքներ եղան ստորագրութիւն առնել տնատէրերից յիշեալ շինութիւններին ոչինչ չաւելացնել, իսկ շինութիւններ բռնող տարածութիւնները ծախել տնատէրերին։ Իսկ հարց դնել և որոշել տները հիմքից վերցնել, այդ շատ դժուար հարուած կը լինի տնատէրերին, որոնք իրանց վերջին կոպէկները դրել և տուն են կառուցել յիշեալ հողերի վրա։

Մենք լիայոյս ենք, որ ներկայ վարչութիւնը մեղմ կերպով կը լուծի այդ տների հարցը, որովհետև մեղքը հին կազմին է վերաբերում, որ թոյլ է տուել և շինութիւնը չէ դադարեցրել, որ շատ հեշտ կերպով կարող էր կանգնեցնել։ Ճիշդ է, որ քաղաքը տգեղանում է յիշեալ շինութիւնների հողերի գրաւումներով, որոնք զրկում են զբօսնող հասարակութեան գեղեցիկ տեսարաններից, բայց մոռանալու չէ նաև, որ մարդկանց գործ դրած աշխատանքը, քըրտինքը պէտք է գնահատի ինքնավարութիւնը և նրանց չը ձգի աղքատութեան և թշուառութեան գիրկը։ Մարդիկ թռչուններ չեն, որ մի բնից միւսը հեշտութեամբ չուեն. այստեղ կապիտալն է խօսում, փողն է մէջտեղ ընկած։

Ամբողջ մեղքը ծանրանում է հին կազմի, հին ձայնաւորների վրա։ Սաղանդարեան

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

—o—

ԱՌԱՋԻԿԱՅ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱՌԻԹՈՎ

I

Թէև մինչև այսօր շատ բան գրվեց ամեն կողմից կաթողիկոսական հարցի մասին և շատ տեղին—երբեմն էլ շատ անտեղի—խնդիրներ դրվեցին հրապարակ և մանրազնին քննութեան ենթարկվեցին, բայց և այնպէս ես էլ աւելորդ չեմ համարում նոյն խնդրի մասին իմ դիտողութիւններս մէջ բերել. գուցէ հնարաւոր լինի դրանով խնդիրն աւելի պարզաբանել և նրա աջող լուծմանը նպաստել։

Ամենից առաջ պէտք է նկատեմ, որ մեր առաջ դրված խնդիրը այնպիսի համազգային ծանրակշիռ նշանակութիւն ունեցող խնդիր է, որ նրան պէտք է մօտենալ միայն մաքուր խղճով եւ սրտով, բոլոր կողմնակի՝ անձնական և կուսակցական՝ հաշիւները մէկդի դրած։ Ամենայն հայոց կաթողիկոս ընտրել կուսակցական կամ անհատական դիտումներով և ոչ թէ հայոց եկեղեցու բուն շահի գիտակցութեամբ առաջնորդվելով՝ կը նշանակէ դաւաճանել հայոց եկեղեցուն և հայ ժողովրդին, վտանգի ենթարկել նրա առանց այն էլ կասկածելի, խղճուկ գոյութիւնը։ Ամենայն հայոց հայրապետութիւնը պէտք է վեր լինի բոլոր կուսակցութիւններից, եթէ ուզում ենք, որ նա կարողանայ իր պատմական միսիան ներկայումս և ապագայում էլ այնպէս կատարել, ինչպէս որ նա կարողացել է կատարել այն անցեալում։

Հասկանալու համար, թէ ինչ է եղել հայոց հայրապետութեան դերն անցեալում և ուրեմն ինչ կարող է լինել նաև ներկայում և ապագայում, պէտք է մի քանի բնորոշ գծեր աչքի առաջ ունենալ հայոց երջանկայիշատակ հայրապետների գործունէութիւնից։ Իմ ակնարկած բնորոշ գծերը ամենացայտուն կերպով արտայայտվում են ս. Գրիգոր Լուսաւորչի՝ հայոց առաջին հայրապետի, Ներսէս Մեծի, ս. Սահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի, Սահակ Գ. Ձորափորեցու, Ներսէս Շնորհալու, Մովսէս, Փիլիպպոս, Յակոբ, Սիմէօն Երևանցի, Ներսէս Աշտարակցի և Գէորգ Դ. կաթողիկոսների գործունէութեան մէջ։

Առաջին գիծը, որ աչքի է զարնվում սրանց գործունէութեան մէջ, այն է, որ նրանք ամեն կերպ աշխատում են հոգ տանել հայ ժողովրդի մտաւոր, բայց դրա հետ միասին նաև հոգևոր կրօնական-բարոյական դաստիարակութեան մասին։ Յիշածս բոլոր հայրապետներն աշխատել են իբրև իսկական հոգևորականներ և քրիստոնէութեան կրօնական-բարոյական սկզբունքների ջերմ պաշտպաններ, քարոզչութեան, դպրոցների, գրի և գրականութեան միջոցով մտաւոր և բարոյական կրթութիւն տարածել հայ ժողովրդի մէջ, փարատել այն թանձր խաւարը, որի մէջ բոլոր ժամանակների անբարեյաջող հանգամանքների շնորհիւ խարխափում էր հայ ժողովուրդը։

Այդպիսի լուսաւորիչ գործունէութիւնն է պատճառը, որ երախտապարտ սերունդը ոչ միայն չէ կարողացել մոռանալ նրանց, այլ շատերին սրբերի կարգը դասելով՝ միւսների անունն էլ ամենամեծ երկիւղածութեամբ և պատկառանքով է յիշում։

Այդպիսի գործունէութեան շնորհիւ է, որ հայ ժողովրդի ինքնուրոյն ազգային կազմակերպութիւնն է առաջ եկել և բոլոր դժուարութիւնների ու վտանգների հանդէպ մինչև այսօր իր գոյութիւնը պահպանել։ Դրանով է որ հայոց ժողովրդական եկեղեցին ազգային բնաւորութիւն է ստացել, հայ ժողովրդի և իր եկեղեցու շահերը սերտ կերպով միացել են, կարելի է ասել նոյնացել են միմեանց հետ և նրանց միջից վերացել է այն խոր վիհը, որ այլ տեղեր անջատում է ժողովուրդ և եկեղեցի, հոգևոր և աշխարհիկ դասակարգ։

Մի այլ ոչ պակաս կարևոր գիծ հայոց հայրապետների գործունէութեան մէջ բըղխում է հէնց հայ ժողովրդի վիճակից։ Հայ ժողովուրդը միշտ գտնվել է հալածական վիճակի մէջ. և որովհետև ուրիշ ոչ մի ներկայացուցչութիւն չէ ունեցել, որ կարողանար պաշտպանել իր շահերը, այդ պատճառով էլ հայ հոգևորականութեանն ու հայոց հայրապետութեանն է վիճակվել նաև իր բանւոր հօտը հալածանքներից ու արհաւիրքներից պաշտպանելու հոգսը։ Պատմութիւնը մեզ ուսուցանում է, որ հայոց հայրապետութիւնը իրան վիճակված այդ դերն էլ առաջին օրերից մինչև այսօր մեծ պատւով է կատարել։ Նա եղել է և այսօր էլ է հայ ազգի ներկայացուցիչը օտարների առաջ, նրա իրաւունքներն ու դատը պաշտպանողը անիրաւութիւնների և հալածանքների դէմ, դրանով դառնալով նաև ի սփիւռս աշխարհի ցրված ամբողջ հայ ազգութեան միութեան կապն ու օղակը։

Այդ է եղել անկասկած հայոց հայրապետութեան նշանակութիւնը, դերը և գործունէութեան բնորոշ գիծը անցեալում, և ուրիշ նշանակութիւն, դեր կամ գործունէութեան նպատակ նա ունենալ չէ կարող նաև ներկայում և մեզ համար հասկանալի մօտիկ ապագայում։ Այսօր էլ հայ ժողովուրդը նոյնչափ կարիք ունի մտաւոր և բարոյական դաստիարակութեան, այսօր էլ դպրոցներն ու քարոզչութիւնը նրա համար նոյնքան կենսական նշանակութիւն ունեն, ինչքան որ դարեր առաջ։ Այժմ էլ ճիշդ այնպէս, ինչպէս մի ժամանակ, ազգային ոգին և նրա ուղիղ զարգացումը կարող է միայն հայ ժողովրդին կորչելու, ձուլվելու վտանգից ազատել։ Եւ կասկած չը կայ, որ այդ ազգային ոգին արթնացնելու և զօրացնելու մէջ այժմ էլ շատ մեծ դեր է վիճակված հայ հոգևորականութեանն ու նրա անմիջական հսկողութեան և պատասխանատւութեան ներքոյ գտնվող հաստատութիւններին։ Եւ վերջապէս 20-րդ դարում էլ հայ ժողովուրդը մեծ չափով ենթակայ է հալածանքների և հարստահարութիւնների, ինչպէս մի ժամանակ. մօտիկ անցեալն ու Պարսկաստանի և Թիւրքիայի ներկայ իրականութիւնը ապացոյց են այդ բանի. և այսօր էլ, ինչպէս շեշտեցինք, դարձեալ հայ հոգևորականութիւնն ու հայոց հայրապետութիւնն է հայ ժողովրդի ներկայացուցիչն ու պաշտպանը բոլոր նեղութիւնների, հալածանքների և վշտի օրերում։

Հայերի աւանդը այս խնդիրներում դեռ այսօր էլ իր նշանակութիւնը չէ կորցրել։ Հայոց հայրապետութիւնը կարողութիւն պէտք է ունենայ միայն այդ աւանդը պահելու և զարգացնելու։

Երուանդ Տէր-Մինասեանց

(Կը շարունակվի)

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԴԱՀԼԻՃԻՑ

Նոր-Բայազէտ, 5 սեպտեմբերի

Սկսած օգոստոսի 25-ից Երևանի նահ. դատարանի քրէական սեսսիան բանալով իր նիստը մեզանում քննում է գաւառի քրէական գործերը։

Սեպտեմբերի 3-ին ի միջի այլոց քննըվում էր մի հետաքրքրական գործ, որ վերաբերում էր քաղաքային պրիստաւ Բօրօդինին վիրաւորելուն։ Դահլիճը ասեղ գցելու տեղ չը կար։ Գործը հետևեալն է։

Տեղացի Պօղոս Բաղիկեանցի տանը այս տարվայ փետրվարի 5-ին նշանադրութիւն կար։ Պրիստաւ Բօրօդին, որի բնակարանը մօտ է լինում այդ խնջոյքի սրահին, երբ լսում է դափ ու զուռնայի ձայն, գիշերվայ կէսին գնում է արգելելու զուռնայի ձայնը, քանի որ նրան հրամայված էր դափ ու զուռնան արգելել փողոցներում։ Մտնելով Պ. Բաղիկեանցի տունը՝ պրիստաւ Բօրօդին՝ արբած դրութեամբ, առանց վերնազգեստի (մունդիր) սկսում է աջ ու ձախ հարուածել ներկայ եղողներին, որոնք սկզբում չեն էլ ճանաչում, թէ դա պրիստաւ է, քանի որ մի կողմից առանց ուսադիրների է լինում, իսկ միւս կողմից դեռ նոր է ստանձնած լինում այդ պաշտօնը։ Կարծելով որ կողմնակի մարդ է, Պ. Բաղիկեանցի երկու որդիքը, նոյնպէս արբած դրութեամբ, կռիւ են սկսում նրա հետ։ Տղաներից մէկը նոյնիսկ խլում է պրիստաւի ձեռքից սուրը, վիրաւորում է վերջինիս գլխից և մարմնի այլ մասերից՝ 10-ից աւելի վէրք հասցնելով Բօրօդինին։ Այդ միջոցին վիրաւորվում է նաև Բաղիկեանի կինը—ձեռքից—որը բաժանելիս է եղել իր տղերանցը պրիստաւի հետ տեղի ունեցած կռւում։ Իսկոյն իմաց է տրվում ոստիկանութեան, գնում է դէպքի տեղը գաւառապետը և բանտարկել տալիս Բաղիկեան եղբայրներին։

Մինչդեռ դատաստանական դահլիճում հանդիսականների աչքերը յառած էին դէպի դատաւորների ամբիոնը, յանկարծ լսվում է, որ այդ գործը դադարում է՝ գանգատաւոր պրիստաւ Բօրօդինի բացակայութեան պատճառով՝ անորոշ ժամանակով։ Իսկ այդ անորոշ ժամանակը, ինչպէս սովորաբար եղել է, կը լինի գարնան նիստին, երբ ապրիլին դարձեալ նահանգական դատարանի բաժինը բաց կանի իր նիստերը մեզանում։

Ուրեմն 7—8 ամիս բանտում մնալուց յետոյ եղբարք Բաղիկեանները դարձեալ նստելու են բանտում 7—8 ամիս էլ, քանի որ նրանց երաշխաւորութիւնով չեն համաձայնում արձակել բանտից մինչև այդ գործի քննութեան օրը։

Մեղադրեալ Բաղիկեաններին պաշտպանելու էր Ա. Հասան-Ջալալեանց։

Պրիստաւ Բօրօդինն այդ տխուր դէպքից անմիջապէս յետոյ հեռացված էր պաշտօնից։ Ասում են, որ նա այժմ գտնըվում է Երևանում։ Որսորդ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Կովկասի Փոխարքային ներկայացվեց Թիֆլիսի քաղ. վարչութեան միջնորդութիւնը, որպէսզի թոյլ տրվի 1913 թ. յունիս ամսին ևս գումարել կովկասեան քաղաքների ներկայացուցիչների երկրորդ համագումար։

◆ Թիֆլիսի կանանց բարձր դասընթացքներում ուսումը կը սկսվի այսօրվանից՝ արդէն չորսամեայ դասընթացքների լիակատար ծրագրով։ Յիշեալ կրթական հաստատութիւնը օրէ-ցօր գրաւում է լայն ժողովրդականութիւն. Ներկայումս այնտեղ ուսանում են 311 հոգի. միւս կողմից ընդունելութիւնը շարունակվում է։

◆ Թիֆլիսի քաղ. դումայի նոր ձայնաւորների ընտրութիւններին մասնակցող տնատէրերից նրանք, որոնք այսօր և եթ չը ներկայացնեն քաղաքային վարչութեան իրանց գնահատման տուրքի պարտքը, կը զրկվեն ընտրութիւններին մասնակցելու իրաւունքից։

◆ Այսօր բացվում է օպերային ներկայացումների սեզօնը Թիֆլիսի Արքունական թատրօնում։ Ըստ սովորութեան կը տրվի «Жизнь за Царя» օպերան։

◆ Թիֆլիսի Արտիստական Ընկերութեան թատրօնում ներկայացումների սկիզբը նշանակված է սեպտ. 18-ին Գօգօլի «Վերաքննիչ» կոմէդիայով։

◆ Սեպտեմբերի 18-ին Զուբալովեան Ժողովրդական Տանը Գեպշտէյնը կարդալու է դասախօսութիւն Ռօդէնբախի մասին։

◆ Անցեալ օրը կայացաւ քաղաքային տնտեսական դումայական մասնաժողովի նիստը, ուր քննութեան առնվեց մսի ու հացի սակագները փոխելու խնդիրը։ Մասնաժողովը, ծանօթանալով մսի շուկայի արդի պայմանների հետ, որոշեց թողնել այժմեան սակագինը, այսինքն ոչխարի մսի ֆունտը 14 կ., իսկ տաւարինը՝ 11 կ.։ Ինչ վերաբերում է հացի գներին, մասնաժողովը ծանօթանալով ուրիշ քաղաքներում գոյութիւն ունեցող ալիւրի սակագնին՝ եկաւ այն եզրակացութեան, թէ անհրաժեշտ է հացի գները Թիֆլիսում ևս աւելացնել, ուստի և որոշվեց թոնրի հացի 1-ին տեսակի ֆունտը $4^1/_2$ կոպէկից շինել $4^3/_4$ կ., երկրորդ տեսակի ֆունտը 4 կոպէկից շինել $4^1/_4$ կ., փռան հացի ֆունտը 4 կոպէկից շինել $4^1/_2$ կ., իսկ լաւաշը աւելացնել ֆունտին $^1/_2$ կ.։

◆ Գօրիսում այս ամսի վերջին կը բացվի թռչնապահութեան ցուցահանդէս։

◆ Անցեալ օրը Հալաբարի կլուբում ճաշ տրվեց ի պատիւ բժ. Իգիթեանի, որ երկար արձակուրդով մեկնում է արտասահման։ Բժիշկ Իգիթեանը Հալաբարի ազգաբնակութեան օգտին ունի մատուցած բաւականին ծառայութիւն։ Ճաշի ժամանակ բժիշկը ցանկութիւն յայտնեց, որ շուտով իրագործվի Հալաբարում օրիորդաց պրօգիմնազիա հաստատելու միտքը, որը ներկայ եղողների կողմից ընդունվեց մեծ համակրանքով։ Այդտեղ ևեթ հարուստ Նունուֆարեան, «Т. Л.»-ի ասելով, նուիրում է 1000 ր., խոստանալով տալ դարձեալ 9000 ր., Ս. Փօրաքեան նուիրում է 300 ռուբլի։

◆ Խաղողի բերքը Երևանի նահանգում այս տարի, մեր ունեցած տեղեկութիւնների համաձայն, բաւարար է. մի փոքր անգոհացուցիչ է Գանձակի շրջանում։

◆ Վրացիների «Նոր կլուբը» իր բացման օրից, այսինքն յունիսի 20-ից, մինչև սեպտեմբերի 1-ը զուտ արդիւնք է ունեցել 21,922 ր. 36 կոպէկ։

◆ Աւճալայի քաղաքային ջրամբարի շինութիւնների վրա հսկելու պաշտօնը յանձնըված է ինժեներ Մուխարինսկիին։

◆ Անցեալ շաբաթ Ջալալ-Օղլիում կայացել է Կ. Հ. Բ. Ընկ. տեղական նոր բացված ճիւղի ընդհանուր ժողովը, ուր կազմըվել է նախահաշիւը և կայացել են ընտրութիւններ։ Վարչութեան անդամներ են ընտրվել Ս. սարկաւագ Երզնկեան, Ս. Խանաղեան, Կ. Վարդազարեան, Դ. Ջիթեան և Յ. Դադիվանեան։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Վ. Փափազեան՝ «Պատմութիւն հայոց գրականութեան սկզբից մինչև մեր օրերը». (բանաւոր գրականութիւն. հին, միջին և նոր դարեր. Նորագոյն շրջան՝ ռուսահայ և թիւրքահայ գրականութիւն). Թիֆլիս, 1911 թիւ, էլեքտրատպ. օր. Ն. Աղանեանի, հրատարակութիւն Գ. Փաշտեանի, № 46, գինն է 1 ր. 50 կոպէկ։

Մի օտարոտի գրքի հետ գործ ունենք այս անգամ։

Վ. Փափազեանին մենք գիտենք իբրև

վիպագրողի, իբրև հեղինակի արևելեան կեանքից առնված մի շարք աջողված փոքրիկ պատկերների։

Այսօր Նա հանդէս է գալիս իր հազար երեսանոց՝ հաստափոր թէև համեմատաբար էժանագին աշխատութեամբ, որը կրում է «Պատմութիւն հայոց գրականութեան» վերնագիրը։

Գրքի առաջին երեք մասը ամփոփում է հին գրականութիւնը և լոյս էր տեսել առանձին հրատարակութեամբ դեռ ևս 1907 թւին ու կովկասեան ուսումնարանական շրջանի հոգաբարձութեան կողմից էլ թոյլատրվել էր գործածել իբրև ձեռնարկ հայոց գրականութեան համար միջնակարգ դպրոցներում։

Այդ թոյլատրված ձեռնարկին այժմ հեղինակը աւելացրել է նոր և նորագոյն գրականութիւնը, նոյնպէս և թիւրքահայ գրականութիւնը. ապա կցված է գրքին այն հեղինակների ցուցակը, որոնց մասին խօսում է հեղինակը, ու բերված են նմոյշներ ժողովրդական հին ու միջնադարեան բանահիւսութիւններից։

Պէտք է նկատել, որ այս աշխատութիւնը լոյս է տեսնում Լէօի և Լ. Մանուէլեանի ռուսահայ գրականութեան պատմութիւններից յետոյ։ Ուրեմն պէտք է լինէր աւելի լուրջ, լրիւ, աւելի աջողված ու աւելի լուսաբանված։

Հասարակական խնդիրները, երևոյթները, հոսանքները, գրական դէմքերի հետ միասին, պէտք է ենթարկվէին նոր աշխարհահայեացքների ու տեսակէտների, նոր լուսաբանութեան ու վերլուծութեան և, որ գլխաւորն է, անաչառ գնահատութեան, որոնց մէջ երևար պատմագրողի սուր ու վերլուծող ըմբռնողութիւնը։

Բայց պակասում է թէ առաջինը և թէ երկրորդը։

Պատճառը պարզ է։

Առաջինի համար պահանջվում է հեղինակից տոկուն, երկարատև աշխատանք, բազմակողմանի հմտութիւն ու պատրաստականութիւն, մինչդեռ Վ. Փափազեանը կատարել է հապճեպ ու վայր ի վերոյ։

Երկրորդի վերաբերմամբ հեղինակը չէ պահպանել հարկաւոր լրջութիւնը, չունի ճշգրիտ չափը և չէ հետևում պատմագրողին վայել անաչառութեան։

Եւ, ի հարկէ, այդ տեսակ անաջող պայմաններում կեանքի ու գրականութեան շաղկապը պէտք է թուլանար, պէտք է կորցնէր իր հետևողականութիւնը և զրկվէր այն «որոշ սիստեմից», որի մասին յիշում է իր գրքի առաջաբանում։

Մանաւանդ այդ նկատելի է նոր ու նորագոյն շրջանի մասերում։

Զարմանալի մակերևոյթային է և արհամարհական նրա վերաբերմունքը դէպի 60-ական ու 90-ական թւականների շարժումը. գրական-գաղափարական հոսանքները նրա նկարագրութեամբ կորցնում են իրանց բոլոր հմայքն ու արժէքը։

Գրական դէմքերի քարակտերիստիկաները կատարված են անշնորհք, տաղտկալի, անհամապատասխան կերպով։ Ոչ գրողի գրական դէմքն է ճիշդ որոշված, ոչ տեղը, ոչ խաղացած դերը։ Չէ պահպանված նոյն իսկ ժամանակագրական կարգը։

Բոլորովին մակերևոյթային է հեղինակի վերաբերմունքը առ հասարակ և ընդհանրապէս դէպի գրական-երևոյթները։ Ընթերցողը, կարդալով այդ գիրքը ծայրէ ի ծայր, այնուամենայնիւ չէ կարող իմանալ Վ. Փափազեանի կարծիքը գրականութեան և նրա այս ու այն շրջանի գաղափարական և գեղարուեստական էութեան մասին։ Իսկապէս ինչ բան է հայ գրականութիւնը, որո՞նք են նրա բնորոշ ճիւղաւորութիւնները, տեսակները, ինչպէս են զարգացել մեզանում, ովքեր են իւրաքանչիւրի ներկայացուցիչները, ինչ հասարակական արմատների վրա են զարգացել և ինչ ազդեցութիւն են թողել։

Հրապարակախօսութեան էութիւնը և դերը չեն գիտակցված և բնականաբար չեն ստացել իրանց արժանավայել տեղը. գրծագրված են վայր ի վերոյ ու խառնափնթորված։ Թարգմանական գրականութիւնը ըստ երևոյթին գրականութիւն չէ համարում Փափազեանը։ Անսիստեմ խօսում է ռոմանտիզմի, իրապաշտական գրականութեան ու հոգեբանական վէպերի մասին։

Այո, խօսում է...

Բայց մինթէ այդ երեք ճիւղաւորութիւններով էլ վերջանում է մեր գեղարուեստական գրականութիւնը։

Ապա ինչ բան են գաղափարական գրական նոր հոսանքները—փիլիսոփայական, հասարակագիտական, սիմվօլական, ժողովրդական. մինթէ մուտք չեն գործել մեզանում և արժանի չեն յիշատակութեան։

Բացի դրանից՝ կրիտիկան, քննադատութիւնը իր առանձնայատուկ էջը չը պէ՞տք է ունենար մեր գրականութեան պատմութեան մէջ։

Այժմ դառնանք գրական այն դէմքերին, որոնց արժանի է համարել Վ. Փափազեանը «Պատմութիւն հայոց գրականութեան» մէջ յաւերժացնելու։

Ինչպէս երևում է, գրական տրադիցիա և էտիկա ասված բանն էլ ամենևին չէ ընդունում Փափազեանը։

Մինչդեռ այդ տրադիցիան ու էտիկան պահանջում են չը յիշատակել պատմական ձեռնարկի մէջ այն տեսակ գրողների, որոնց մասին հասարակական կարծիքը իր տրամադրութիւնը, իր որոշումը դեռ ևս չէ ցոյց տուել ոչնչով, չէ արտայայտել ո՛չ իր համակրանքը և ո՛չ իր հակակրանքը. այդ մէկ. և երկրորդ՝ որ քննադատութիւնը չէ արտասանել իր դատավճիռը։

Իսկ եթէ ոտնակոխ պէտք է անել այդ բոլորը և յանձնարարել «յիշատակելի է», «յուսատու է», «ուշադրութեան արժանի է» որակումներով, աւելի լաւ չէ՞ր լինի յիշել նաև միացեալ «իսկական գեղարուեստական յուսատու գրողներին»։ Օրինակ, երբ յիշվում է «բանաստեղծ» Մռճառեանը, Արամ Զարըգը, պէտք է յիշել Դօղօխեանին, Քրիստ. Թադէոսեանին, որի «Երբ ալեկոծը», «Սիրոյս հետը» մի ժամանակ թնդում էր խուլ անկիւններում անգամ. պէտք է յիշել Ա. Կրասիլնիկեանին, Պալեանին, Ա. Մխիթարեանին, Սրինգին, Ջանեանին։

Եթէ յիշվում են Միք. Մանուէլեան, Մարգար Աւետխեան, Մաղաք Պետրոսեան, ապա ինչու չը յիշել Գէորգ Զուբարին, Եր. Լալայեանին, Նամալեանին, Ա. Եզեկեանին, Լ. Սարգսեանին, Սրուանձտեանին, Ստեփանէին, Սարուխանին, Ստ. Մալխասեանին, Իսահակ Յարութիւնեանին, Տէր-Ղևոնդեանին, Ս. Մանդինեանին, տ. Հրաչեային, Գ. Տէր-Պօղոսեանին («Հովոցի Եղօն» պատմուածքի համար) և այլն։ Եթէ պէտք էր յիշել Խնկոյեանին, Յ. Աղաբաբին, ինչու չը յիշել Հայկունուն, Ռ. Մելիք-Ադամեանին, Գ. Տէր-Գրիգորեանին, Տէր-Մարկոսեանին, Տէր-Նիկողոսեանին։ Ինչու չը յիշել Ցարօյին, Քիշմիշեանին, Սօվեանին, Յ. Եսայեանին և շատ շատերին։

Երգիծաբանութեան ճիւղի մէջ եթէ յիշվում են իբրև երգիծող Տմբլաչի-Խաչանը և Աշոտ Աթանասեանը, ինչու չը յիշել նաև Վրձինին, Քաղքցուն, Մոծակին, Ղլայչի-Մարգարին։

Ու այդպէս «ինչու»-ներին, իբրև պատասխան, եթէ հակադրէինք ուրիշ գրողներին էլ, կարելի էր շարել 50-ից աւելի անուններ նոյնքան յիշատակութեան արժանի։

Չենք կարող լռութեան տալ մի տգեղ, բացարձակ աչառու վերաբերմունք, որ ցոյց է տալիս իրան գրականութեան պատմութիւնը կազմող Փափազեանը։

Խօսքս Շահրիարի մասին է, որին յանձնարարում է «մի ուրիշ հեղինակ էլ» որակումով և ամենավերջին տեղը յատկացնում։ Հ. Առաքելեանի վիպական աշխատութիւններից մինթէ յայտնի է միայն «Ջհուդ Քուշանը»։ Մարգը մի ամբողջ հատոր ունի վէպերի։

Եթէ Շահրիարից այդ է միայն յիշվում, էլ ինչու զարմանալ, որ դեռ ևս չը կազմակերպված, սկսնակի շրջանից դուրս չեկած գրողների գործերից յիշատակված չեն նրանք, որոնք իսկապէս արժանի էին յիշատակվելու, օրինակ՝ Մ. Մանուէլեանի «Սպիտակ ծաղիկները», Մարգար Աւետիսեանի՝ «Կոյր Բաբին», «Հալածանքի ծնունդը» և այլն։

Այդպէս ուրեմն՝ «Էմմայի» հեղինակից դրանից աւելի անփոյթ, աչառու վերաբերմունք դէպի մի այդպիսի լուրջ ու պատասխանատու գործ, ինչպիսին է «Հայոց գրականութեան պատմութիւնը», անկարելի էր սպասել։ Եւ ահա թէ ինչու այդ հաստափոր աշխատութիւնը դուրս է եկել մի տեսակ աշակերտական շարադրութիւն, այն էլ շատ անաջող։ Շօշափված հարցերը պարզված չեն մինչև իսկ հեղինակի իրա համար. իրար ետևից շաղկապված ֆրազաներն ու բառակոյտերը չեն կարողանում այնուամենայնիւ ոչ պարզել ու պատճառաբանել հասարակական կեանքի երևոյթներն ու շարժումները, ոչ էլ ամփոփ գաղափար տալ ժամանակագրական ու յաջորդականութեան կարգից դուրս նետված, ցանուցիր եղած դէմքերի խաղացած դերի ու ազդեցութեան մասին հայ գրական կեանքում. մի կեանք, որի պատկերը Փափազեանի գրչի տակ էլ աւելի է մթնանում։

Այ թէ ինչպիսի անհամութիւններ են երբեմն մատուցվում հայ հասարակութեան։

Այդպէս էլ կը լինի միշտ, եթէ հասարակ կոմպիլյատորը, ստատիստը ձեռնարկում է մասնագիտական լուրջ աշխատանքի։

Մինթէ քիչ են ոչ-մասնագէտ անձինք, մինչև իսկ ո՛չ ուսուցիչներ, որոնք դպրոցական դասագրքեր են կազմում խեղճ ու կրակ հայ մանուկների համար և ինչ-ինչ միջոցներով, բայց ոչ իրանց արժանաւորութեամբ, նրանց շլինքին փաթաթում։

Ո՞վ է դրանց վրա հսկողը, որոշ կարգ ու կանոն սահմանողը։

Միւս դասագրքերի խնդիրը դեռ ևս այնքան կարևորութիւն չունի սակայն, որքան «Հայոց գրականութեան պատմութեանը»։

Եթէ նրա առաջին մասը հաւանութիւն է ստացել, այդ դեռ հասկանալի է, և հեղինակը պէտք է գնահատէր այդ հանգամանքը ու չը միացնէր նրան վերջին բոլորովին անաջող մասն էլ։

Միակ յիշատակութեան արժանին գրքի մէջ նրա պատմելու թեթև ոճն է, սահուն լեզուն և էժանութիւնը։ Ապա թէ ո՛չ ինքն ըստ ինքեան այդ գիրքը իբրև դպրոցական ձեռնարկ միայն ապացոյց է այն բանի, թէ ինչպիսի քաօս և թիւր հասկացողութիւններ են տիրում մեր դպրոցական գրականութեան ասպարիզում։ Հարկաւոր է փոքր ինչ լուրջ լինել և մի քիչ էլ բարեխիղճ։

Լ. Դանիէլեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Բաց նամակ Միքայէլ Մանուէլեանին

Գանձակ, 5 սեպտեմբերի

Երէկվայ «Մշակի» № 193-ում, «Բանասիրական» բաժնում տպված էր մի պատմուածք «Մաղրածուն» վերնագրով, որի տակ ստորագրված էր Միք. Մանուէլեան անունը։ Ինձ թւում է, թէ դա մի փոխադրութիւն է օտար լեզուից։ Հետաքրքրական է իմանալ՝ ճիշդ է իմ այս կարծիքը, հետևաբար և հասարակ տպագրական պատահականութիւն է «թարգմանութիւն» բառը մամուլի տակից դուրս սպրդելը, կամ թէ իսկապէս սա մի ինքնուրոյն կերտուածք է՝ Մանուէլեանի մտքի ստեղծագործութիւն։

H—ель

Իմ պատասխանը պ. H—ель-ին

«Մաղրածուն» ոչ փոխադրութիւն է և ոչ էլ թարգմանութիւն, և սխալմամբ չէ որ հրատարակված է իմ անունով։ Միանգամայն ինքնուրոյն իմ պատմուածքներից մէկն է, որի նիւթը ինձ պատմել է դերասան Ի. Ալիխանեանը։

Իսկ եթէ նոյն նիւթի մի այլ մշակման դուք հանդիպել էք մի այլ տեղ, դժուար չէ մակաբերել, որ դա համանման նիւթի զանազան մշակումների բազմաթիւ դէպքերից մէկն է։

Միք. Մանուէլեան

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ «Р.Сл.»-ի թղթակիցը հեռագրում է Կ. Պօլսից. «Հայ կաթօլիկների ազգային ժողովում վճռվեց՝ այն դէպքում, եթէ պապը համաձայնէ Թերզեան պատրիարքի հետ՝ պատրիարքարանը Հռոմ փոխադրելու մասին, անջատվել կաթօլիկ եկեղեցուց. ընդունել ուղղափառութիւն, դիմել կառավարութեանը խնդրելով յայտնել պատրիարքարանին, որ պատրիարքական աթոռը Հռոմ փոխադրելու դէպքում, նա կը զրկվի բոլոր արտօնութիւններից։ Որոշվեց նաև տեղեկացնել պապին, որ հայ ժողովուրդը չէ ճանաչում Թերզեան պատրիարքին և որ հայերը պատրաստ են բաժանվել կաթօլիկ եկեղեցուց»։ Նոյն թղթակիցը հաղորդում է, որ եկեղեցում ամբոխը յարձակվեց այն քահանայի վրա, որ կարդում էր Թերզեան պատրիարքի թուղթը, ծեծեց նրան և պատռեց թուղթը։

◆ Մայրաքաղաքի լրագիրների ասելով, բարձր կառավարական շրջաններում սպասվում են խոշոր փոփոխութիւններ։

◆ Կոմս Վիտտէն հեռագրով կանչվեց Պետերբուրգ։

◆ Մօտիկ ապագայում մինիստրների խորհրդի նախագահ Կոկօվցեվը գալու է Ղրիմ։

◆ Նորանոր փաստերից երևում է, որ աւելի պէտք է կասկածել Կիէվի պահնորդական բաժանմունքի՝ Ստոլիպինի սպանութեան մէջ անմասն չը լինելու մասին, քան այդ թւում էր սկզբում։

◆ «Р. Сл.» թերթը հաղորդում է, որ Պրիամուրի գեներալ-նահանգապետ Գօնդատտիին ներքին գործերի մինիստր նշանակելը ընդունվել է սկզբունքով։

◆ Հարցաքննութեան ժամանակ Ստոլիպինին սպանող Բօգրօվը խոստովանեց, որ մոլորեցրել է պահնորդական բաժանմունքին և ոչ մի յեղափոխականի չէ մատնել։ Նա յանձն առաւ սպանել Ստոլիպինին կուսակցութեան պահանջով, որը սկսել էր կասկածել Բօգրօվի անկեղծութեանը։ Դատարանը խորհրդակցեց ընդամենը 20 րոպէ։ Բօգրօվը իր մահվան դատավճիռը լսեց միանգամայն հանգիստ, առանց յուզվելու։

◆ Լրագիրների ասելով, Կուրլօվի փոխարէն նշանակվելու է Պետերբուրգի պահնորդական բաժանմունքի նախկին պետ Գէրասիմովը։

◆ Արձակվեցին ձերբակալված ինժենէր Սպատէնը Պետերբուրգում և բժ. Բօգրօվը՝ Բաքւում։

◆ Ռուսաց արտաքին գործերի մինիստրութեան 1912 թ. նախահաշւով եկամուտը հաշւված է 5.569,000 րուբլի։ Գաղտնի ծախքերը կազմում են 537,000 րուբլի։

◆ Թաւրիզի կէսը քարուքանդ է արված էկս-շահի մարդկանց ձեռքով։

◆ Լուր է տարածված էկս-շահի ամենագլխաւոր աջակից Շուա-Սալթանէի սպանութեան մասին։

◆ Սպանիայում օրհասական կռիւ է յեղափոխականների և կառավարական կազմի միջև։

◆ Տրիպօլիսում ցոյցեր են տեղի ունենում իտալացիների դէմ։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ամառային երթևեկութիւն)

(Ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

ԲԱԳՈՒ՝ **արագ** № 2 **գնացքը**՝ 9 ժ. 38 ր. առաւօտ., Աղստաֆա է հասնում 12 ժ. 15 ր. կէսօրին, Գանձակ՝ 2 ժ. 47 ր. ցեր.., Եւլախ՝ 4 ժ. 20 ր. ցեր., Հաջի-Կաբուլ՝ 8 ժ. 10 ր. երեկ., Բալաջարի՝ 11 ժ. գիշ., Բագու՝ 11 ժ. 33 ր. գիշեր.: **Պօստատար** № 4 **գնացքը**՝ 12 ժ. 36 ր. գիշ., Աղստաֆա է հասնում 8 ժ. 28 ր. գիշ., Գանձակ՝ 6 ժ. 37 առաւօտ., Եւլախ՝ 3 ժ. 35 ր. առաւօտ., Հաջի-Կաբուլ՝ 1 ժ. 7 ր. կէսօր., Բալաջարի՝ 4 ժ. 24 ր. ցերեկ., Բագու՝ 5 ժ. 42 ր. ցերեկ.: **Մարդատար** № 6 **գնացքը**՝ 3 ժ. 34 ր. ցեր., Աղստաֆա է հասնում՝ 6 ժ. 46 ր. երեկ., Գանձակ՝ 9 ժ. 57 ր. երեկ., Եւլախ՝ 11 ժ. 54 ր. գիշեր., Հաջի-Կաբուլ՝ 4 ժ. 22 ր. գիշ., Բալաջարի՝ 7 ժ. 36 ր. առաւօտ., Բագու՝ 8 ժամ 13 ր. առաւօտ.: **Խառն գնացքը**՝ IV կարգի վագօններով ըստ հարկի կարևորութեան՝ 5 ժ. 15 ր. գիշ., Աղստաֆա է հասնում 9 ժ., 19 ր. առաւօտ., Գանձակ՝ 1 ժ. 36 ր. ցեր., Եւլախ՝ 5 ժ. 4 ր. երեկ., Հաջի-Կաբուլ՝ 11 ժ. 44 ր. գիշեր.: Բալաջարի՝ 4 ժ. 33 ր. գիշ., Բագու՝ 5 ժ. 44 ր. առ.,

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ՝ **պօստատար** № $^{74}/_{75}$՝ 1 ժ. գիշ. Ղարաքիլիսա է հասնում 8 ժ. 16 ր. առաւօտ., Ալէքսանդրօպօլ՝ 11 ժ. 50 ր. ցերեկ., Էջմիածին կայար. 5 ժ. 7 ր. երեկ., Ուլուխանլու՝ 5 ժ. 34 ր. երեկ. (առանց Երևան մտնելու): Սակայն Ուլուխանլուից առանձին գնացքը ուղևորվում է Երևան 6 ժ. 11 ր. երեկ. և հասնում է Երևան 6 ժ. 54 ր. երեկ., Նախիջևան՝ 11 ժ. 2 ր. գիշեր., Ջուլֆա՝ 12 ժ. 46 ր. գիշերվայ: **Մարդատար-ապրանքատար** № $^{78}/_{79}$ **գնացքը**՝ 5 ժ. 48 ր. երեկ., Ղարաքիլիսա է հասնում 1 ժ. գիշերվայ, Ալէքսանդրօպօլ՝ 4 ժ. 34 ր. գիշ., Էջմիածին կայարան՝ 9 ժ. 45 ր. առաւ., Երևան՝ 11 ժ. 10 ր. ցերեկվայ և սրանից դէնը այլևս չէ գնում:

ԲԱԹՈՒՄ՝ **արագ.** № 1 **գնացքը**՝ 11 ժ. 8 ր. գիշ., Միխայլօվօ է հասնում 2 ժ. 10 ր. գիշ., Բաթում՝ 9 ժ. 43 ր. առաւօտ: **Պօստատար** № 3 **գնացքը**՝ 10 ժ. 47 ր. առ., Միխայլօվօ է հասնում 3 ժ. ցերեկվայ, Բաթում՝ 12 ժ. 35 ր. գիշ.: **Մարդատար** № 5 **գնացքը**՝ 5 ժ. 15 ր. երեկ., Միխայլօվօ է հասնում 9 ժ. 27 ր., երեկ., Բաթում՝ 6 ժ. 26 ր. առ.: **Խառն գնացքը** IV կարգի վագօններով ըստ հարկի կարևորութեան 10 ժ. 3 ր. երեկ., Միխայլօվօ է հասնում 4 ժ. 41 ր. գիշ., Բաթում 6 ժ. 4 ր. երեկոյեան:

ԲՈՐԺՈՄ՝ **մարդատար** № $^{7}/_{8}$ **գնացքը**՝ 8 ժ. 18 ր. առաւօտ., Գօրի է հասնում 10 ժ. 52 ր. առ., Բօրժօմ՝ 1 ժ. 38 ր. ցերեկ.: **Մարդատար** № $^{9}/_{10}$ **գնացքը**՝ 3 ժ. ցերեկ., Գօրի է հասնում 5 ժ. 34 ր. երեկ., Բօրժօմ՝ 8 ժ. 28 ր. երեկոյեան:

ԹԻՖԼԻՍ Է ՀԱՍՆՈՒՄ

ԲԱԳՈՒԻՑ՝ **մարդատար** № 5 **գնացքը**՝ 4 ժ. 25 ր. ցերեկ.: **Պօստատար** № 3 **գնացքը**՝ 9 ժ. 52 ր, առ.: **Արագ** № 1 **գնացքը**՝ 10 ժ. 24 ր.՝ երեկ.: **Խառն գնացքը** IV կարգի վագօններով՝ 9 ժ. 5 ր. երեկ.:

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆԻՑ՝ **պօստատար** № $^{72}/_{73}$ **գնացքը**՝ 7 ժ. 38 առաւօտ.: **Մարդատար-ապրանքատար**՝ № $^{80}/_{81}$ **գնացքը**՝ 1 ժ. 26 ր. ցերեկվայ:

ԲԱԹՈՒՄԻՑ՝ **արագ** № 2 **գնացքը**՝ 8 ժ. 52 ր. առաւօտեան: **Պօստատար** № 4 **գնացքը**՝ 11 ժ. 40 ր. գիշ.: **Մարդատար** № 6 **գնացքը**՝ 2 ժ. 54 ցերեկ. **Խառն գնացքը** IV կարգի վագօններով՝ 4 ժ. 17 ր. գիշերվայ:

ԲՈՐԺՈՄԻՑ՝ **Մարդատար** № $^{9}/_{10}$ **գնացքը**՝ 9 ժ. 28 ր. գիշ.: **Մարդատար** № $^{7}/_{8}$ **գնացքը**՝ 7 ժ. 18 ր. առաւօտեան:

Ծանօթութիւն.—Արագ գնացքներով (№ 2՝ Թիֆլիսից Բագու՝ և № 1 Բագու-Թիֆլիս) առանց վագօնը փոփոխելու կարելի է հաղորդակցել Թիֆլիս-Բագու-Ռոստով, միայն վճարելով պլացկարտի գինը:

ԲԺԻՇԿ
Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆ
ՎԵՐԱԴԱՌՆԱԼՈՎ վերսկսեց հիւանդների ընդունելութիւնը։
Բէբուտովսկայա փող. № 33.
(ա.օ.) 888. 3—2

ԲԺՇԿՆ. ՖԷԼԴՇԷՐ
Ա. Գ. ԵՍԱՅԵԱՆ
Սրսկումն, լուացումն, մասսաժ, էլեքտրականութիւն, մարմնամարզութիւն։ Հիմնաւոր բժշկութիւն սուր և խրօնիքական տրիպէրի, սեռական թուլութեան, անկարողութեան և սերմնահոսութեան—ցոյց է տալիս հմուտ մասնագէտ բժիշկների։ Օտարերկրեայ հիւանդներին տալիս է խորհուրդներ և բժիշկների հասցէներ։ Կարելի է ստանալ իմ կազմած «Գաղտնի հիւանդութիւնների բժշկարանը», գինը 50 կոպ., ճանապարհածախս՝ 15 կ.։ Հասցէս. Тифлисъ, Семеновская ул., № 9. Ընդունելութիւնը 4—6 ժամը երեկոյեան։
(ե.հ.կ.) 892. 50—1

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ
Յայտնում եմ ի գիտութիւն յարգելի հասարակութեան, որ թատրոնի նախկին տէր տ. Ս. Օ. ԻՎԱՆԻՑԿԱՅԱՆ «ԼԻՐԱ» թատրոնի հետ ոչ մի առնչութիւն չունի։ Յիշեալ թատրոնը գտնվում է Վետցելի տանը, Միխայլովսկի պր. վրա, № 103.
«ԼԻՐԱ» թատրոնի վարչութիւն
(ա. օ.) 890. 2—2

ՀԱՇԻԱՊԱՀԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
Գ. ԵՒ Մ.
ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆՆԵՐԻ
Նիկօլաեվսկայա, 36, Վօրօնցօվի արձանի մօտ։ Դիւանատունը բաց է երեկոյեան ժամը 4—6-ը։
(ա. օ.) 818. 25—18

Լոյս են տեսել
Յ. ՏԷՐ-ՄԻՐԱՔԵԱՆԻ
հետևեալ գրքերը ◆ ըստ ծրագրի
1) «Իրաշրջանների վերածված թւաբանական խնդիրների ժողովածու», Ա. և Բ. տարիների դասընթաց, գինը 30 կ.
2) Հարտման և Ռուզամի «Իրաշրջանների վերածված խնդիրների ժողովածու», Գ. տար. դասընթաց, Բ. տպ., գինը 30 կ.
3) Նոյն գրքի Դ. տար. դասընթաց, գ. 35 կ.
4) «Դասաւանդութեան ուղեցոյց»։ Օրինակելի դասեր և նրանց տեսութիւնը, գ. 1 ր.
Պահեստը «ԳԻՐ» գրախանութում։
(օ. մ.) 885. 3—2

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՈՒՊՐԱՎԱ
Սեպտեմբերի 20-ին, ցերեկվայ ժամը 12-ին Թիֆլիսի Քաղաքային Ուպրավայում կը նշանակվի աճուրդ անպէտք ճանաչված անասունների և խոզերի ճարպի։ Աճրդի հանվող ճարպին վերաբերեալ պայմանների հետ կարելի է ծանօթանալ Քաղաքային Ուպրավայի III բաժանմունքում։
897. 1—1

Հրատարակութիւն «ՊԵՍՏԱԼՈՑՑԻ» գրատան
ԳՈՒՐԳԷՆ ՀԱՅԿՈՒՆՈՒ
ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐՔՈՅԿՆԵՐ ԳՈՒՆԱՒՈՐ ՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ
Լոյս են տեսել
1) ԴԵՐՁԱԿ ԱՂՈՒԷՍԸ . . . 25 կ.
2) ԱՔԼԱՐԻ ԴԱՍԸ . . . 20 »
3) ՋՂՋԻԿ . . . 5 »
Տպագրվում են
4) ՄԱՐԴԻԿ ԱՊԵՐԱԽՏ
5) ԲԱԴՆ ՈՒ ԳՈՐՏԸ
6) ՊԱՍ ՊԱՀՈՂ ԱՂՈՒԷՍԸ
7) ԿԱՏՈՒԻ ԲԻԼԷԹԸ
Գումարով գնողներին սովորական զեղչ։
Դիմել՝ Тифлисъ. Книжный и писчебумажный магазинъ «Песталоцци», Михайл. пр., № 99.
(հ.կ.) 874. 6—3

Լոյս տեսաւ եւ վաճառվում է ՔԱՐՏԵԶ
ՊԱՏՄԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ
ԵՒ
ՀԱՐԵՒԱՆ ԵՐԿԻՐՆԵՐԸ.
Կազմեց Գ. ՎԱՐԴԱՆԵԱՆ, նկարեց Գ. ԴԻԽՏԵՐԳԻՓ
ԳԻՆԸ 4 Ր. (առանց կազմի)
Մեծաքանակ գնողներին որոշ զեղչ։
Դիմել կազմողին Թիֆլիս, Ванкскій пер. № 7 և «Գուտտենբերգ», «Գիր», «Կենտրոնական» ու այլ հայ գրավաճառներին։
(ե.հ.կ.) 875. 5—3

Տ. Մ. ՓԻԼՈՅԵԱՆԻ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐՈՒՄ
ՆՈՐ ՄԵԹՕԴՈՎ ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ ԵՆ
ՖՐԱՆՍԵՐԷՆ, ԳԵՐՄԱՆԵՐԷՆ և ԱՆԳԼԻԵՐԷՆ
ազատ կարդալ, գրել և խօսել կարճ ժամանակվայ ընթացքում տեսական և գործնական պարապմունքների միջոցով, հանրամատչելի վճարով։ Կազմակերպվում են հասակաւորներից երեկոյեան խմբեր։ Ձախողական դասընթացքներ արտասահման գնալ ցանկացողների համար։ Մանրամասն տեղեկութիւնները և ընդունելութիւնները կուրսերի գրասենեակում—ամեն օր՝ առ. ժամը 10—12-ը և եր. 4—7-ը։ Միխայլովսկի պր. № 24/4.
(ե. հ. շ.) 862. 0—5

ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ԿՈՎԿԱՍԻ ՓՈԽԱՐՔԱՅԻ
ԴԻՒԱՆԱՏԱՆ ՏՊԱՐԱՆԸ
(ԼՕՐԻՍ-ՄԵԼԻՔՕՎՍԿԱՅԱ ՓՈՂՈՑ, ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ՏՈՒՆ)
կատարում է ամեն տեսակ տպարանական աշխատանքներ, այն է՝ տպագրում է լրագիրներ եւ ամսագիրներ, գրքեր, բրօշիւրներ, բլանկներ, աֆիշաներ, ծրագիրներ, հարսանեկան հրաւիրատոմսեր, այցեքարտեր եւ այլն։
Ընդունվում են տպագրական պատուէրներ հետեւեալ լեզուներով՝ ռուսերէն, հայերէն, վրացերէն, թուրքերէն, ֆրանսերէն, գերմաներէն, արխազերէն և լեռնականների բարբառով։ Պատուէրները կատարվում են մաքուր, ճշտօրէն և չափաւոր գներով։ Ընդունվում են նաև շուտափոյթ կատարվելիք պատուէրներ առանձին պայմաններով։
Պատուիրողների ցանկութեան համաձայն, տպարանը պատուէրները կարող է կազմել տալ, կամ բրօշիւրներ շինել, ու այնու յանձնել։
ԿԱՆ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԶԱՆԱԶԱՆ ՏԵՍԱԿ ԹՂԹԵՐ ՊՐԷՅՍ-ԿՈՒՐԱՆՏԻ ԳՆԵՐՈՎ։
Տելեֆօն № 67.

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.